



Մարդկային
զարգացման
միջազգային
կենտրոն



Ազգային
վիճակագրության
ծառայություն



Առողջապահության
ազգային
ինստիտուտ



Անդրկովկասում
բնրամիջոցների
դեմ պայքարի
ծրագիր



Ձեկույց

Հայաստանի բնակչության
շրջանում թմրամիջոցների,
ալկոհոլի և ծխախոտի
տարածվածության
համահանրապետական
ուսումնասիրության
արդյունքների

2005

ՁԵԿՈՒՅՑ

Հայաստանի բնակչության
շրջանում թմրամիջոցների,
ալկոհոլի և ծխախոտի
տարածվածության
համահանրապետական
ուսումնասիրության
արդյունքների

Երևան 2005

Չեկույց՝ Հայաստանի բնակչության շրջանում թմրամիջոցների, ալկոհոլի և ծխախոտի տարածվածության համահանրապետական ուսումնասիրության արդյունքների

Հետազոտության արդյունքների հիման վրա գեկույց նախապատրաստելու աշխատանքներին մասնակցել են փորձագետներ՝ **Գ.Գյուրջյանը** և **Ա.Բազարջյանը**:

Չեկույցը հրատարակվել է «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից Եվրոպական Միության և Միավորված ազգերի զարգացման ծրագրի համաֆինանսավորմամբ իրականացվող «Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի ծրագրի» օժանդակությամբ: Հրատարակության բովանդակության համար պատասխանատվություն կրում է միայն «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Հրատարակության բովանդակությունը չի կարող մեկնաբանվել որպես Եվրոպական Միության կամ Միացյալ ազգերի զարգացման ծրագրի տեսակետների արտացոլում:

Նախաբան

2005թ-ի ապրիլի 1-ից մինչ նոյեմբերի 1-ը Հայաստանում իրականացվեց «Չափահասների շրջանում տարածված թմրամիջոցները» վերնագրով սոցիոլոգիական հարցումը: Հարցմանը մասնակցեց մոտ 4000 մարդ Հայաստանի բոլոր մարզերից: Հարցման նպատակն էր պարզել, թե որքանով են ներկայում օգտագործվում ապօրինի թմրամիջոցներ և դեղամիջոցներ, ալկոհոլ և ծխախոտ, ինչպես նաև վեր հանել թվարկված նյութերն օգտագործողների և վերոհիշյալ երևույթների նկատմամբ հասարակության վերաբերմունքը: Հայաստանի համար այսօրինակ հարցումն աննախադեպ էր: Անդրկովկասում թմրամոլության դեմ պայքարի ծրագրի¹ աջակցությամբ իրականացված այս հարցման արդյունքները թույլ են տալիս բավական արժեքավոր տեղեկություններ ստանալ ալկոհոլի, անօրինական թմրամիջոցների և դեղամիջոցների օգտագործման, ինչպես նաև ծխելու վերաբերյալ: Այս ամենը ելակետային նյութ կարող է հանդիսանալ հետագա հետազոտությունների և առողջապահության բնագավառի աշխատակիցների ու քաղաքականություն մշակողների գործունեության համար:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Հայաստանում թմրամիջոցների հիմնախնդիրն օրինապահ մարմինների հատուկ ուշադրության կենտրոնում է: Այս խնդիրն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում նաև ՀՀ առողջապահական համակարգը՝ մասնավորապես թմրամոլների և ալկոհոլ օգտագործողների բուժման եղանակով: Վերջին 3-4 տարիների ընթացքում տարբեր պետական և հասարակական մասնագիտական կազմակերպություններ սկսել են ավելի ուշադիր լինել ոչ միայն նշված խնդիրների, այլև հանրային առողջության և հասարակության վրա դրանց թողած բացասական ազդեցության հանդեպ: Այդ իսկ պատճառով այս հարցումը խիստ ժամանակին էր: Հայաստանի առողջապահական համակարգն աստիճանաբար ինտեգրվում է եվրոպական առողջապահական կառույցներին, և այս հարցումն իրականացվել է՝ իբրև ուղենիշ ընդունելով «Ընդհանուր

¹ Եվրամիության կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից իրականացվող «Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի ծրագիրը» 2001 թվականից ի վեր զանազան միջոցառումներ է իրականացնում տարածաշրջանում: Ծրագրի նպատակն է աջակցել 33 կառավարությանը թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին ուղղված ջանքերում՝ նպատակ ունենալով նվազեցնել թմրամիջոցների տարանցիկ շարժը տարածաշրջանից դեպի ԵՄ անդամ երկրներ:

բնակչության շրջանում թմրամիջոցների օգտագործման սոցիոլոգիական հարցումներ անցկացնելու ձեռնարկը»²:

Հարցման արդյունքներն օգտակար կարող են լինել նաև Հայաստանի օրենսդրական դաշտի հետագա կատարելագործման հարցում, քանզի հարցաթերթիկներում շոշափված խնդիրներն առնչվում են նաև առողջապահության իրավական եզրերին: Ստորև ներկայացվում է թմրամիջոցների և առնչվող արդի իրավական միջավայրը Հայաստանում:

Օրենսդրություն

2003թ. փետրվարի 10-ին Հայաստանի Հանրապետության նախագահը վավերացրեց 2002թ. դեկտեմբերին Ազգային ժողովի կողմից ընդունված «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքը: Վերջինս սահմանում է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիների առողջության, պետության և հասարակության անվտանգության սպառնալուծան նպատակով դրանց ապօրինի շրջանառությունը կանխարգելելու ազգային քաղաքականության իրավական հիմքերն ու թմրամոլության դեմ պայքարի հիմնական միջոցները:

2003թ. ընդունվեց ՀՀ քրեական նոր օրենսգիրքը: Ի տարբերություն նախորդի, գործող օրենսգրքով թմրամիջոց օգտագործելու և դրանց ապօրինի շրջանառությամբ զբաղվելու համար սահմանվել են ավելի խիստ պատժամիջոցներ: Այսպես, թմրամիջոցների օգտագործումը Հայաստանի օրենսդրությամբ դիտվում է որպես հանցագործություն, եթե անձն այն օգտագործում է առանց բժշկի նշանակման (մինչ այդ վարչական պատասխանատվություն էր կիրառվում նույն այդ զանցանքի համար): Փոքր քանակությամբ թմրամիջոցներ պահելը նույնպես համարվում է քրեական հանցագործություն:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ խստացվել են պատժամիջոցները թմրամիջոցների հետ կապված հանցագործություն կատարելու համար: Իր հերթին, «Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի ծրագրի» (ԱԹՊ) շրջանակներում ստեղծված հատուկ աշխատանքային խումբը մշակել է օրենսդրական փոփոխությունների և լրացումների փաթեթ:

² Ընդհանուր բնակչության շրջանում թմրամիջոցների օգտագործման սոցիոլոգիական հարցման ձեռնարկ, 2002թ. օգոստոս, «Թմրամիջոցների և թմրամոլության վերահսկման եվրոպական կենտրոն» (ԹԹՎԵԿ) www.emcdda.org

Բովանդակություն

| | |
|---|----|
| Նախաբան..... | 3 |
| Օրենսդրություն..... | 4 |
| Յետագոտության մեթոդաբանությունը..... | 13 |
| Տվյալների հավաքագրումը..... | 15 |
| Յետագոտության արդյունքները..... | 16 |
| Ընտրանքային համակցության ընդհանուր նկարագիրը..... | 16 |
| Ծխախոտ..... | 17 |
| Ալկոհոլ..... | 18 |
| Դեղամիջոցներ..... | 20 |
| Ապօրինի թմրամիջոցներ..... | 24 |
| Վերաբերմունքը..... | 26 |
| Քննարկում..... | 32 |
| Ծխախոտ..... | 32 |
| Ալկոհոլ..... | 33 |
| Դեղամիջոցներ..... | 34 |
| Ապօրինի թմրամիջոցներ..... | 34 |
| Վերաբերմունքը..... | 35 |
| Ամփոփում և առաջարկներ..... | 37 |

Աղյուսակների ցանկ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

| | |
|---|----|
| Աղյուսակ 1. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ տարիքային խմբերի՝ մարզերով..... | 41 |
| Աղյուսակ 2. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբերի՝ մարզերով..... | 42 |
| Աղյուսակ 3. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ կրթական մակարդակի՝ մարզերով..... | 43 |
| Աղյուսակ 4. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ սեռի և կրթական մակարդակի՝ մարզերով..... | 44 |
| Աղյուսակ 5. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ գրաղվածության կարգավիճակի՝ մարզերով..... | 45 |

Աղյուսակ 6. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ սեռի և գեղդավածության կարգավիճակի՝ մարզերով.....46

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԾԽԱԽՈՏ

Աղյուսակ 1. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ ծխելու հայտանիշի (ըստ սեռի և տարիքային խմբերի).....48

Աղյուսակ 2. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ ծխելու հայտանիշի (ըստ մարզերի և տարիքային խմբերի).....48

Աղյուսակ 3. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ ծխելու հայտանիշի. ք. Երևան (ըստ սեռի և տարիքային խմբերի)49

Աղյուսակ 4. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ ծխելու հայտանիշի. այլ մարզեր (ըստ սեռի և տարիքային խմբերի)49

ԱԼԿՈՅՈՒ

Աղյուսակ 5. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ վերջին 1 տարվա ընթացքում ալկոհոլ օգտագործելու հայտանիշի (ըստ սեռի և տարիքային խմբերի).....50

Աղյուսակ 6. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ վերջին 1 տարվա ընթացքում ալկոհոլ օգտագործելու հայտանիշի (ըստ մարզերի և տարիքային խմբերի).....50

Աղյուսակ 7. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ վերջին 1 տարվա ընթացքում ալկոհոլ օգտագործելու հայտանիշի. ք. Երևան (ըստ սեռի և տարիքային խմբերի)51

Աղյուսակ 8. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ վերջին 1 տարվա ընթացքում ալկոհոլ օգտագործելու հայտանիշի. այլ մարզեր (ըստ սեռի և տարիքային խմբերի)51

Աղյուսակ 9. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ ալկոհոլի օգտագործման հաճախականության (ըստ սեռի և տարիքային խմբերի).....52

Աղյուսակ 10. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ ալկոհոլի օգտագործման հաճախականության (ըստ մարզերի և տարիքային խմբերի).....52

Աղյուսակ 11. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ միևնույն ժամանակ/դեպքում վեց բաժակից ավելի ալկոհոլ օգտագործելու հայտանիշի (ըստ սեռի և տարիքային խմբերի)53

Աղյուսակ 12. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ միևնույն ժամանակ/դեպքում վեց բաժակից ավելի ալկոհոլ օգտագործելու հայտանիշի (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... 53

Աղյուսակ 13. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 30 օրվա ընթացքում ալկոհոլի օգտագործման հայտանիշի (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... 54

Աղյուսակ 14. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 30 օրվա ընթացքում ալկոհոլի օգտագործման հայտանիշի (ըստ մարզերի և տարիքային խմբերի) 54

Աղյուսակ 15. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 30 օրվա ընթացքում ալկոհոլի օգտագործման հայտանիշի. ք. Երևան (ըստ սեռի և տարիքային խմբերի) 55

Աղյուսակ 16. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 30 օրվա ընթացքում ալկոհոլի օգտագործման հայտանիշի. այլ մարզեր (ըստ սեռի և տարիքային խմբերի) 55

Աղյուսակ 17. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 30 օրվա ընթացքում ալկոհոլի օգտագործման հաճախականության (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... 55

Աղյուսակ 18. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 30 օրվա ընթացքում ալկոհոլի օգտագործման հաճախականության (ըստ մարզերի և տարիքային խմբերի) 57

Աղյուսակ 19. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 30 օրվա ընթացքում ալկոհոլի օգտագործման հաճախականության. ք. Երևան (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... 57

Աղյուսակ 20. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 30 օրվա ընթացքում ալկոհոլի օգտագործման հաճախականության. այլ մարզեր (ըստ սեռի և տարիքային խմբերի) 58

ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ

Աղյուսակ 21. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 1 տարվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործելու հայտանիշի (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... 59

Աղյուսակ 22. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 1 տարվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործելու հայտանիշի (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... 59

Աղյուսակ 23. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը
Նախորդող 1 տարվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ
տրանսկվիլիզատոր օգտագործելու հայտանիշի. ք. Երևան (ըստ սեռի և
տարիքային խմբերի)..... 60

Աղյուսակ 24. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը
Նախորդող 1 տարվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ
տրանսկվիլիզատոր օգտագործելու հայտանիշի. այլ մարզեր (ըստ սեռի և
տարիքային խմբերի)..... 60

Աղյուսակ 25. Հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր
օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հանգստացուցիչ միջոց
կամ տրանսկվիլիզատոր օգտագործելու հաճախականության (ըստ սեռի և
տարիքային խմբերի)..... 61

Աղյուսակ 26. Հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր
օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հանգստացուցիչ միջոց
կամ տրանսկվիլիզատոր օգտագործելու հաճախականության (ըստ
մարզերի և տարիքային խմբերի)..... 61

Աղյուսակ 27. Հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր
օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող
30 օրվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր
օգտագործելու հայտանիշի (ըստ սեռի և տարիքային խմբերի) 62

Աղյուսակ 28. Հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր
օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 30
օրվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր
օգտագործելու հայտանիշի (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... 62

Աղյուսակ 29. Հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր
օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող
30 օրվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր
օգտագործելու հայտանիշի. ք. Երևան (ըստ սեռի և տարիքային
խմբերի)..... 63

Աղյուսակ 30. Հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր
օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ հարցմանը նախորդող 30
օրվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր
օգտագործելու հայտանիշի. այլ մարզեր (ըստ սեռի և տարիքային
խմբերի)..... 63

Աղյուսակ 31. Հարցմանը նախորդած 30 օրվա ընթացքում
հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր օգտագործածների
թվաքանակի բաշխումն ըստ հանգստացուցիչ միջոցը կամ
տրանսկվիլիզատորն օգտագործելու հաճախականության (օրերով) (ըստ
սեռի և տարիքային խմբերի)..... 64

Աղյուսակ 32. Հարցմանը նախորդած 30 օրվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ հանգստացուցիչ միջոցը կամ տրանսկվիլիզատորն օգտագործելու հաճախականության (օրերով) (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... 64

Աղյուսակ 33. Հարցմանը նախորդած 30 օրվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ հանգստացուցիչ միջոցը կամ տրանսկվիլիզատորն օգտագործելու հաճախականության (օրերով). ք. Երևան (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... 65

Աղյուսակ 34. Հարցմանը նախորդած 30 օրվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ հանգստացուցիչ միջոցը կամ տրանսկվիլիզատորն օգտագործելու հաճախականության (օրերով). այլ մարզեր (ըստ սեռի և տարիքային խմբերի) 65

Աղյուսակ 35. Հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ հանգստացուցիչ միջոցի կամ տրանսկվիլիզատորի ձեռքբերման եղանակի (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... 66

Աղյուսակ 36. Հանգստացուցիչ միջոց կամ տրանսկվիլիզատոր օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ հանգստացուցիչ միջոցի կամ տրանսկվիլիզատորի ձեռքբերման եղանակի (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... 66

ԱՊՕՐԻՆԻ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ

Աղյուսակ 37. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ թմրամիջոց օգտագործող անձանց ճանաչելու հայտանիշի (ըստ թմրամիջոցի տեսակի)..... 68

Աղյուսակ 38. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ թմրամիջոցների օգտագործման հայտանիշի (տոկոսով)..... 68

Աղյուսակ 39. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ թմրամիջոց օգտագործող անձանց ճանաչելու հայտանիշի (ըստ թմրամիջոցի տեսակի)..... 69

Աղյուսակ 40. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ թմրամիջոց օգտագործող անձանց ճանաչելու հայտանիշի (ըստ թմրամիջոցի տեսակի)..... 70

Աղյուսակ 41. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ թմրամիջոց օգտագործելու հայտանիշի 71

| | |
|--|----|
| Աղյուսակ 42. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ թմրամիջոց օգտագործելու հայտանիշի | 72 |
| Աղյուսակ 43. Թմրամիջոց օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ առաջին անգամ օգտագործելու տարիքի | 73 |
| ԿԱՐԾԻՔՆԵՐ | 74 |
| Աղյուսակ 44. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Դուք թմրամոլին համարում եք ավելի շատ որպես հանցագործ, թե հիվանդ» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... | 74 |
| Աղյուսակ 45. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Դուք թմրամոլին համարում եք ավելի շատ որպես հանցագործ, թե հիվանդ» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... | 75 |
| Աղյուսակ 46. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Մարդկանց պետք է թույլատրել ընդունել հաշիշ կամ մարիխուանա» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... | 75 |
| Աղյուսակ 47. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Մարդկանց պետք է թույլատրել ընդունել հաշիշ կամ մարիխուանա» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... | 76 |
| Աղյուսակ 48. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Մարդկանց պետք է թույլատրել ընդունել հերոին» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... | 76 |
| Աղյուսակ 49. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Մարդկանց պետք է թույլատրել ընդունել հերոին» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... | 77 |
| Աղյուսակ 50. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Էքստազի փորձելը մեկ կամ երկու անգամ» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... | 77 |
| Աղյուսակ 51. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Էքստազի փորձելը մեկ կամ երկու անգամ» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... | 78 |

| | |
|--|----|
| Աղյուսակ 52. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Հերոին փորձելը մեկ կամ երկու անգամ» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... | 79 |
| Աղյուսակ 53. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Հերոին փորձելը մեկ կամ երկու անգամ» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... | 79 |
| Աղյուսակ 54. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Տաս կամ ավելի գլանակ սիգարետ ամեն օր ծխելը» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... | 80 |
| Աղյուսակ 55. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Տաս կամ ավելի գլանակ սիգարետ ամեն օր ծխելը» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... | 80 |
| Աղյուսակ 56. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Շաբաթվա ընթացքում մեկ-երկու անգամ ակոհոլային խմիչքներ օգտագործելը» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... | 81 |
| Աղյուսակ 57. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Շաբաթվա ընթացքում մեկ-երկու անգամ ակոհոլային խմիչքներ օգտագործելը» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... | 81 |
| Աղյուսակ 58. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Ժամանակ առ ժամանակ մարիխուանա կամ հաշիշ օգտագործելը» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... | 82 |
| Աղյուսակ 59. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Ժամանակ առ ժամանակ մարիխուանա կամ հաշիշ օգտագործելը» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... | 82 |
| Աղյուսակ 60. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Օրական մեկ տուփից ավել սիգարետ ծխելը» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ սեռի և տարիքային խմբերի)..... | 83 |
| Աղյուսակ 61. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Օրական մեկ տուփից ավել սիգարետ ծխելը» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ մարզերի և տարիքային խմբերի)..... | 83 |

Աղյուսակ 62. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Հանգստյան օրերին հինգ և ավելի անգամ խմելը» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ սեռի և տարիքային խմբերի).....84

Աղյուսակ 63. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ «Հանգստյան օրերին հինգ և ավելի անգամ խմելը» արտահայտության վերաբերյալ տրված պատասխանների (ըստ մարզերի և տարիքային խմբերի).....84

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Հետազոտությամբ ստացված միջին արժեքների արժեմեծությունները և ստանդարտ սխալի ու վստահության միջակայքի նվազագույն և առավելագույն միջակայքերը (95% հավանականության պարագայում). ըստ մարզերի89

Հետազոտությամբ ստացված միջին արժեքների արժեմեծությունները և ստանդարտ սխալի ու վստահության միջակայքի նվազագույն և առավելագույն միջակայքերը (95% հավանականության պարագայում). ըստ մարզերի90

Հետազոտությամբ ստացված միջին արժեքների արժեմեծությունները և ստանդարտ սխալի ու վստահության միջակայքի նվազագույն և առավելագույն միջակայքերը (95% հավանականության պարագայում). ըստ սեռի91

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունն իրականացվել է Եվրամիության երկրներում կիրառվող և «ԹԹՎԵԿ»-ի թմրամոլության վերահսկման եվրոպական կենտրոն» (ԹԹՎԵԿ) կազմակերպության կողմից առաջարկվող (1996թ-ից ԹԹՎԵԿ-ը մշակել և փորձարկել է մի շարք համաճարակաբանական ցուցանիշներ, որոնց նպատակն է գնահատել թմրամիջոցների օգտագործման աստիճանն ու օրինաչափությունները, ինչպես նաև դրա որոշիչ գործոններն ու հետևանքները: Որոշ ցուցանիշներ ավելի մանրամասն են մշակվել և ընդունվել են որպես «հիմնական ցուցանիշներ»):³ ու Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից հավանության արժանացած համանուն մոդելային հարցաթերթի հիման վրա:

Հետազոտությունն իրականացվել է բազմաստիճան՝ համաչափ հավանականության ընտրանքով:

Հիմք ընդունելով ՀՀ վարչատարածքային բաժանումը՝ ընտրանքի կառուցման ալգորիթմը ստրատիֆիկացիոն եղանակով գլխավոր համակցությունից ձևավորում է նախնական ընտրանքային միավորներ (ՆԸՄ):

Ստորև նկարագրված է գլխավոր համակցության ստրատիֆիկացման եղանակով իրականացված ընտրանքի մեթոդաբանությունը, որն ընդհանուր առմամբ ներկայացուցչական է՝ ամբողջ հանրապետության համար և ընտրանքի բոլոր աստիճաններում ապահովում է հայտանիշի բոլոր ցուցանիշների կշիռները: Նշված հանգամանքը բացառում է ստացված տվյալների վերակշռման անհրաժեշտությունը, որոնց հարաբերական սխալի մեծությունը 0,954 հավանականությամբ չի գերազանցում

$$\Delta = \sqrt{(N - n) / Nn},$$

բանաձևով հաշվարկված մեծությունը (որտեղ՝ N -ը գլխավոր համակցության ծավալն է, n - ը՝ ընտրանքային համակցության ծավալը):

Նախնական ընտրանքային միավորների ընտրությունը մարզերով իրականացվել է հետևյալ կերպ,

³ «Հինգ հիմնական ցուցանիշեր. առաջարկվող տեխնիկական գործիքների և ուղե-նիշերի նախագիծ», ԹԹՎԵԿ տնօրինություն, Խորհրդի 22-րդ նիստ, սեպտեմբերի 5-7, 2001թ.: Այդ ցուցանիշերն են. 1) ընդհանուր բնակչության շրջանում թմրամիջոցների օգտագործման աստիճանը և օրինաչափությունները, 2) թմրամիջոցների օգտագործման հիմնախնդրի ծավալը, 3) թմրամիջոցներ օգտագործողների կողմից բուժման պահանջարկ, 4) թմրամիջոցների հետ առնչվող մահացություններ և թմրանյութեր օգտագործողների մահացության աստիճան, 5) թմրամիջոցների հետ առնչվող վարակիչ հիվանդություններ (հեպատիտ, ՄԻՎ):

- ք. Երևանի համար այն կազմել է 12՝ հիմք ընդունելով թաղային համայնքների քանակը,
- յուրաքանչյուր մարզի այն քաղաքների համար, որտեղ բնակչության թվաքանակը գերազանցում է 20000-ը, առանձնացվել են նախնական ընտրանքային միավորներ,
- յուրաքանչյուր մարզում փոքր քաղաքները միավորվել են մեկ՝ «քաղաքային բնակավայր» կոչվող նախնական ընտրանքային միավորում,
- յուրաքանչյուր մարզում բոլոր գյուղերը միավորվել են մեկ ընտրանքային՝ «գյուղական բնակավայր» միավորում:

Այսպիսով, նախնական ընտրանքային միավորների ընդհանուր թիվը կազմել է 48:

Ընտրանքի առաջին փուլում ընտրանքի ընդհանուր ծավալը տարանջատվել է սկզբնական միավորների, այն տնային տնտեսությունների թվի քառակուսի արմատի համամասնությամբ, որոնք գտնվել են տվյալ նախնական ընտրանքային միավորներում: Նշված համամասնությունները հաշվարկվել են՝ հիմք ընդունելով ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները: Քառակուսի արմատի կիրառմամբ համամասնության մեթոդի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս, ի տարբերություն «բնակչության թվաքանակի համամասնությամբ» ալգորիթմի, մի կողմից հնարավորություն է ընձեռում ստանալ վիճակագրական ցուցանիշների անշեղ գնահատականներ՝ բերելով դիսպերսիաների նախնական ընտրանքային միավորների ներսում չնչին փոփոխությունների, մյուս կողմից, նշված մոտեցումը մեծացնում է փոքրաթիվ տնային տնտեսություններ ունեցող բնակավայրերի ընտրման հավանականությունը:

Ընտրանքի երկրորդ փուլում Երևանին և այլ մեծ քաղաքներին համապատասխանող նախնական ընտրանքային միավորներն ընտրվել են 1 հավանականությամբ, իսկ մնացած միավորներում բնակավայրերի ընտրությունը կատարվել է պատահական ընտրանքի մեթոդով՝ տվյալ բնակավայրում գտնվող տնային տնտեսությունների թվի համամասնական հավանականությամբ:

Ընտրանքի երրորդ փուլում «քաղաքային բնակավայրերից» ընտրվել են տարածքային միավորներին համապատասխան կլաստերներ, որոնց ընտրանքն իրականացվել է բնակչության թվաքանակին համապատասխան:

Վերոշարադրյալով պայմանավորված՝ երկրորդ և երրորդ փուլերում ապահովվել է նախնական ընտրանքային միավորներում ընդգրկված տնային տնտեսությունների ինքնակշռվածությունը:

Տնային տնտեսությունների հասցեներն ընտրվել են սիտեմատիկ ընտրանքի եղանակով, իսկ հետազոտված տնային տնտեսությունների քանակը կազմել է 1500:

Տվյալների հավաքագրումը.....

Տնային տնտեսություններից անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աշխատանքների ողջ գործընթացն իրականացվել է 60 հարցազրուցավարների կողմից՝ հարցումների միջոցով:

Սինչ այդ, ընտրանքային հետազոտության նախապատրաստման և անցկացման նպատակով իրականացվել է հարցազրուցավարների հրահանգավորման աշխատանքներ, նրանց են հանձնվել հետազոտության համար անհրաժեշտ հարցաթերթերն ու համապատասխան տնային տնտեսությունների ցուցակները:

Հրահանգավորման ընթացքում հարցազրուցավարներին պարզաբանումներ են տրվել հարցաթերթի բովանդակության ու կառուցվածքի, ինչպես նաև ցուցանիշների լրացման առանձնահատկությունների վերաբերյալ: Մանրամասն պարզաբանումներ են տրվել նաև հասցեի անհամապատասխանության, հետազոտության մասնակցելուց հրաժարվելու և այլ դեպքերի ժամանակ հարցաթերթերի լրացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Բացի այդ, հարցման ենթակա տնային տնտեսությունների ցուցակներում ծրագրվածի համեմատ նախատեսվել էր նաև տնային տնտեսությունների լրացուցիչ ցուցակ՝ հետազոտության մասնակցելուց հրաժարվելու կամ հասցեների անհամապատասխանության դեպքերում հնարավոր ռոտացիայի նպատակով:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է ըստ հանրապետության մարզերի: Հարցազրուցավարների կողմից լրացված հարցաթերթերը, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) աշխատակազմի մարզային գործակալություններում թվաբանական և տրամաբանական ստուգման ենթարկվելուց հետո միայն իրականացվել է ստուգված և ծածկագրված հարցաթերթերի մուտքագրումը (մուտքագրման համապատասխան ծրագրի կիրառմամբ):


Հետազոտության արդյունքները

Ընտրանքային համակցության ընդհանուր նկարագիրը.....

«ՀՀ բնակչության շրջանում ծխախոտի, ալկոհոլի, թմրամիջոցների տարածվածության և օգտագործման վերաբերյալ» հետազոտության շրջանակում, ընդհանուր առմամբ, հարցման է ենթարկվել 4269 մարդ, որից 3892-ը պատասխանել են հետազոտության հարցաթերթին, 343-ը հարցման պահի դրությամբ բացակայել են, իսկ 34-ի կողմից ստացվել է մերժում կամ այս կամ այն պատճառով հրաժարվել են մասնակցել հարցմանը:

Ընտրանքային համակցության բաշխումն ըստ հարցազրույցի արդյունքի արտացոլված է ստորև բերված գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Ընտրանքային համակցության բաշխումն ըստ հարցազրույցի արդյունքի



Ըստ մարզերի դիտարկելու պարագայում 3892 հարցվածները բաշխվել են հետևյալ կերպ. 30,1 տոկոսը՝ ք. Երևան և 69,9 տոկոսը՝ այլ մարզեր: Նշված հարաբերակցությունը պահպանվել է նաև տարիքային առանձին խմբերով դիտարկելու պարագայում և տատանվել հետևյալ միջակայքերում. ք. Երևան՝ 26,6-ից 32,1 տոկոս, այլ մարզեր՝ 67,9-ից 73,4 տոկոս: Ըստ սեռի դիտարկելիս՝ կանայք կազմել են հարցվածների ընդհանուր թվի 54,4 տոկոսը, տղամարդիկ՝ 45,6 տոկոսը (հավելված 1, աղյուսակներ 1, 2):


Ըստ կրթական մակարդակի խմբավորման՝ հարցվածների ընդհանուր թվաքանակի 38,3 տոկոսն ունեցել են միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն, 22,8 տոկոսը՝ միջին մասնագիտական, իսկ 22,5 տոկոսը՝ բարձրագույն: Կրթական այլ մակարդակ ունեցողների, ինչպես նաև կրթություն չունեցողների տեսակարար կշիռները տատանվել են 0,3-ից 8,6 տոկոսի միջակայքում: Ընդ որում, Երևան քաղաքում հարցվածների ընդհանուր թվաքանակում առավել բարձր տեսակարար կշիռ են ունեցել բարձրագույն կրթություն ունեցողները՝ 39,2 տոկոս, իսկ այլ մարզերում՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցողները՝ 42,0 տոկոս (հավելված 1, աղյուսակներ 3, 4):

Ըստ զբաղվածության կարգավիճակի պատկերը հետևյալն է. 43,2 տոկոսը եղել են զբաղված (այդ թվում՝ ինքնազբաղված), 23,7 տոկոսը՝ գործազուրկ, 19,0 տոկոսը թռչակառու: Նշված միտումները պահպանվել են նաև Երևան և այլ մարզեր բաշխվածության պարագայում (հավելված 1, աղյուսակներ 5, 6):

Ծխախոտ

Համաձայն հետազոտությանը ստացված արդյունքների, հարցման պահի դրությամբ ծխախոտ է օգտագործել հարցման ենթարկվածների 28,4 տոկոսը: Տարիքային խմբերի դիտարկելու պարագայում, ծխողների տեսակարար կշիռները 25-64 տարիքային խմբերի համար եղել են գրեթե միևնույնը և տատանվել 31,4-34,1 տոկոսի միջակայքում: Ինչ վերաբերում է 16-24 և 65-ից բարձր տարիքային խմբերին, ապա ծխողների տեսակարար կշիռներն այդ տարիքային խմբերում կազմել են համապատասխանաբար 19,3 տոկոս և 21,4 տոկոս:

Գծապատկեր 2. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ ծխելու հայտանիշի՝ տարիքային խմբերով



Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ ծխելու հայտանիշի (տարիքային խմբերով) արտացոլված է վերը բերված գծապատկեր 2-ում:

Ըստ սեռատարիքային բաշխվածության դիտարկելու պարագայում, հարցման պահին ծխախոտ է օգտագործել կանանց՝ 2,1 տոկոսը և տղամարդկանց 59,6 տոկոսը: Ուշագրավ է, որ կանանց շրջանում ծխողների առավել բարձր տեսակարար կշիռն արձանագրվել է 55-64 տարիքային խմբում (4,9 տոկոս): Ինչ վերաբերում է տղամարդկանց շրջանում ծխելու տարածվածությանը, ապա տեսակարար կշռի միջին ցուցանիշից առավել ցածր ցուցանիշն արձանագրվել է միայն 16-24 (39,2 տոկոս) և 65 և բարձր (48,9 տոկոս) տարիքային խմբերում, մինչդեռ մյուս տարիքային խմբերում ծխողների տեսակարար կշիռը տատանվել է 64,2-ից 69,4 տոկոսի միջակայքում:

Ըստ մարզերի դիտարկելու պարագայում ծխողների տեսակարար կշիռը Երևան քաղաքում միջին ցուցանիշից ցածր է եղել 2,4 տոկոսային կետով, իսկ այլ մարզերում՝ բարձր՝ 1,0 տոկոսային կետով: Ուշագրավ է, որ 16-34 տարիքային խմբում ծխողների տեսակարար կշիռը թե՛ Երևանում և թե՛ այլ մարզերում գրեթե նույնն է (հավելված 2, աղյուսակներ 1, 2):

Պատկերն այլ է ըստ **առանձին մարզերի ու սեռատարիքային բաշխվածության** դիտարկելու պարագայում: Այսպես՝ Երևան քաղաքում ծխախոտ օգտագործող կանանց տեսակարար կշիռը կազմել է 4,3 տոկոս՝ գրեթե 4 անգամ գերազանցելով այլ մարզերի համապատասխան ցուցանիշին, իսկ տղամարդկանց պարագայում՝ հակառակը, Երևան քաղաքի համապատասխան ցուցանիշը (54,7 տոկոս) ցածր է եղել այլ մարզերի ծխողների տեսակարար կշռից մոտ 7 տոկոսային կետով (հավելված 2, աղյուսակներ 3,4):

Ավկոհոլ

Համաձայն ստացված արդյունքների՝ վերջին մեկ տարվա ընթացքում ավկոհոլ է օգտագործել հարցվածների 51,2 տոկոսը, այդ թվում՝ կանանց 28,5 տոկոսը և տղամարդկանց 78,3 տոկոսը:


Ըստ սեռատարիքային բաշխվածության դիտարկելու պարագայում ավկոհոլ օգտագործածների տեսակարար կշիռն առավել ցածր է եղել 16-24 տարեկանների համակցությունում: Հատկանշական է, որ տեսակարար առավել բարձր կշիռը կանանց շրջանում արձանագրվել է 35-54, իսկ տղամարդկանց շրջանում՝ 45-64 տարիքային խմբում:

Մարզային հայտանիշով դիտարկելու պարագայում ավկոհոլ օգտագործածների տեսակարար կշիռները թե՛ Երևանում և թե՛ այլ մարզերում

եղել են գրեթե հավասար և կազմել են համապատասխանաբար 53,5 տոկոս և 50,2 տոկոս, մինչդեռ առանձին տարիքային խմբերում տեսակարար կշիռներն ունեցել են էական տարբերություններ: Այսպես, Երևանում ակոհող օգտագործածների տեսակարար կշիռը գերազանցել է այլ մարզերի համանման ցուցանիշը, բացառությամբ 45-54 և 65 և բարձր տարիքային խմբերի, որոնցում վերջին մեկ տարվա ընթացքում ակոհող օգտագործածների տեսակարար կշիռն այլ մարզերի համեմատությամբ ավելի ցածր է եղել՝ (հավելված 2, աղյուսակներ 5, 6, 7 և 8):

Հարցվածների 82,6 տոկոսն ակոհող օգտագործել է ամիսը 2-4 անգամ կամ ավելի հազվադեպ, ինչը, թերևս, թույլ է տալիս ենթադրել, որ ակոհողի օգտագործումը պայմանավորված է առիթ/տոն կամ հանգստյան օրերին օգտագործելու հանգամանքի հետ: Նշված ցուցանիշի պարագայում հարկ է նկատի ունենալ, որ այն հիմնականում բնութագրական է տղամարդկանց համար, որոնք կազմել են դրական պատասխան տվածների 76,3 տոկոս: Իսկ կանանց շրջանում վերջին մեկ տարվա ընթացքում ամիսը մեկ անգամ կամ ավելի հազվադեպ ակոհող օգտագործածները կազմել են ընդհանուրի 88,1 տոկոս: Ի հակակշիռ վերը նկարագրված՝ Երևանի և այլ մարզերի՝ վերջին մեկ տարվա ընթացքում ակոհող օգտագործածների տեսակարար կշիռների էական տարբերության, ուշագրավ է այն, որ այլ մարզերում՝ Երևանի համեմատությամբ, գերակայող են եղել «շաբաթը 4 անգամ կամ ավելի հաճախ», «շաբաթը 2-3 անգամ», «ամիսը 2-4 անգամ» հաճախականությամբ ակոհող օգտագործածների տեսակարար կշիռները: Թերևս այս հանգամանքով է բացատրվում նաև Երևանի համար ստացված բարձր ցուցանիշների տրամաբանությունը (հավելված 2, աղյուսակներ 9, 10):


Գծապատկեր 3. Հարցմանը նախորդած մեկ տարվա ընթացքում ակոհող օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ ակոհող օգտագործելու հաճախականության



Հարցմանը նախորդած մեկ տարվա ընթացքում ակտիվ օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ ակտիվ օգտագործելու հաճախականության արտացոլված է վերը բերված գծապատկեր 3-ում:

Համաձայն ստացված արդյունքների, հարցվածների 65,2 տոկոսը երբեք չի օգտագործել վեց բաժակից ավելի ակտիվ միևնույն ժամանակ, այդ թվում՝ կանանց՝ 95,9 տոկոսը, տղամարդկանց՝ 51,9 տոկոսը: Տղամարդկանց շրջանում առավել բարձր տեսակարար կշռով առանձնացել է «ամիսը մեկ անգամից պակաս» հաճախականությամբ վեց բաժակ և ավելի ակտիվ օգտագործածների տեսակարար կշիռը, որը կազմել է ընդհանուրի 35,2 տոկոսը: Ի տարբերություն դրա, ամեն օր կամ գրեթե ամեն օր վեց բաժակից ավելի ակտիվ օգտագործելու դեպքեր չեն արձանագրվել կանանց շրջանում: Միևնույն ժամանակ վեց բաժակից ավելի ակտիվ օգտագործածների տեսակարար կշիռներն առավել բարձր են եղել այլ մարզերում, իսկ Երևանում մեկ օր կամ գրեթե ամեն օր վեց բաժակից ավելի ակտիվ օգտագործման դեպքեր չեն արձանագրվել 16-24 և 55-64 տարիքային խմբերում (հավելված 2, աղյուսակներ 11, 12):

Գծապատկեր 4. Հարցմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում ակտիվ օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ ակտիվ օգտագործելու հաճախականության



Համաձայն ստացված արդյունքների, հարցման պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ակտիվ է օգտագործել հարցվածների 69,4 տոկոսը, այդ թվում՝ կանանց 45,8 տոկոսը, տղամարդկանց՝ 79,6 տոկոսը, իսկ ըստ մարզային բաշխվածության, նշված ցուցանիշն առավել բարձր է եղել այլ մարզերում՝ 71,2 տոկոս (հավելված 2, աղյուսակներ 13, 14, 15 և 16): Հատկանշական է, որ 45,6 տոկոսն ակտիվ օգտագործել է 1-3 օր, իսկ 23,6 տոկոսը՝ 4-9 օր, այսինքն հարցմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում ակտիվ օգտագործածներին առավելապես բնութագրական է մինչև 9 օր կտրվածքով խմելը, ինչն էլ, թերևս, թղթակցում է այն հանգամանքի

հետ, որ ակոհոլի օգտագործումը հիմնականում պայմանավորվում է տոն և հանգստյան օրերի հետ: Նշված համատեքստում հատկանշական է, որ 4 և ավելի անգամյա հաճախականությամբ ակոհոլ օգտագործելն առավելապես տարածված է այլ մարզերում, որի համար հաշվարկված տեսակարար կշիռները գերազանցել են Երևանի համապատասխան ցուցանիշներին (հավելված 2, աղյուսակներ 17, 18, 19 և 20):

Հարցմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում ակոհոլ օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ ակոհոլ օգտագործելու հաճախականության արտացոլված է վերը բերված գծապատկեր 4-ում:


Դեղամիջոցներ.....

Համաձայն ստացված արդյունքների, հարցմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր է օգտագործել հարցվածների 9,7 տոկոսը: Ըստ սեռատարիքային խմբերի դիտարկելու պարագայում հանգստացուցիչ միջոցի կամ տրանկվիլիզատորի օգտագործումն առավելապես բնորոշ է եղել կանանց և կազմել է ընդհանուրի 12,3 տոկոսը (տղամարդկանց մոտ՝ 6,5 տոկոս): Այդ դեղամիջոցներն օգտագործողների տեսակարար կշիռները թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց համակցություններում աճման միտում է դրսևորում տարիքային խմբերի փոփոխմանը (աճմանը) զուգընթաց: Հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործածների տեսակարար կշիռը ցածր է եղել այլ մարզերում և կազմել է 9,2 տոկոս (Երևանում՝ 10,7 տոկոս) (հավելված 2, աղյուսակներ 21, 22, 23 և 24):

Հարցվածների 45,7 տոկոսը հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործում է ամիսը մեկ անգամ կամ ավելի հազվադեպ հաճախականությամբ: Թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց համակցությունների համար տեսակարար կշիռներն ունեցել են գրեթե նույն արժեքները և կազմել են համապատասխանաբար՝ 45,6 տոկոս և 46,1 տոկոս: Տեսակարար կշիռների միջև տարբերություններն աննշան են եղել նաև շաբաթը 4 անգամ կամ ավելի հաճախ օգտագործողների շրջանում (համապատասխանաբար՝ 15,7 տոկոս և 13,0 տոկոս): Ըստ մարզային բաշխվածության դիտարկելու պարագայում Երևանում առավել ցածր է եղել «շաբաթը 2-3 անգամ» հաճախականությամբ հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործողների տեսակարար կշիռը՝ 8,7 տոկոս, մինչդեռ այլ մարզերում՝ շաբաթը 4 անգամ կամ ավելի հաճախականությամբ օգտագործողներինը կազմել է 12,8 տոկոս (հավելված 2, աղյուսակներ 25, 26):

Հարցմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ օգտագործելու հաճախականության արտացոլված է ստորև բերված գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5. Հարցմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործելու հաճախականության




Հարցմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր է օգտագործել հարցվածների 72,3 տոկոսը, այդ թվում՝ կանանց 73,9 և տղամարդկանց 68,7 տոկոսը: Ըստ մարզային բաշխվածության դիտարկելիս, նշված տեսակարար կշիռն առավել բարձր է եղել Երևանում՝ 81,7 տոկոս, իսկ այլ մարզերում կազմել է 67,6 տոկոս: Ուշագրավ է, որ տեսակարար կշիռների նման էական տարբերություններ արձանագրվել են գրեթե բոլոր տարիքային խմբերում, բացառությամբ՝ 16-24 տարեկանների: Երևան և այլ մարզեր համակցություններն առանձին ըստ սեռի դիտարկելու պարագայում ակներևում է, որ Երևան քաղաքում հարցված և վերջին մեկ ամսվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործածների տեսակարար կշիռը գրեթե 30 տոկոսային կետով գերազանցել է այլ մարզերի համապատասխան ցուցանիշին (հավելված 2, աղյուսակներ 27, 28, 29 և 30):

Ըստ հաճախականության առավել բարձր տեսակարար կշիռ ունեն մինչև 9 օր հաճախականությամբ օգտագործողները, որոնք կազմել են 65,1 տոկոս, իսկ ըստ մարզային բաշխվածության դիտարկելիս՝ Երևանի և այլ մարզերի համապատասխան տեսակարար կշիռների միջև էական տարբերություններ չեն արձանագրվել: Ընդ որում, Երևանի և այլ մարզերի համակցություններն առանձին ըստ սեռի դիտարկելիս հետաքրքրական է այն, որ եթե կանանց համակցությունում հանգստացուցիչ միջոցի

կամ տրանկվիլիզատորի օգտագործման հաճախականությունների միջև էական տարբերություններ չեն արձանագրվել, սպա Երևան քաղաքում առավել հաճախադեպ է տղամարդկանց կողմից հանգստացուցիչ միջոցի կամ տրանկվիլիզատորի օգտագործելու հանգամանքը (հավելված 2, աղյուսակներ 31, 32, 33 և 34):

Հարցմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ օգտագործելու հաճախականության արտացոլված է ստորև բերված գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 6. Հարցմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործածների թվաքանակի բաշխումն ըստ հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործելու հաճախականության




Հետազոտության արդյունքների համաձայն, հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործողների գերակշիռ մեծամասնությունը՝ 71,0 տոկոսը, այն ձեռք է բերում դեղատնից՝ առանց դեղատոմսի, մինչդեռ բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսով ձեռք է բերում հարցվածների միայն 24,6 տոկոսը: Ըստ այդմ, հանգստացուցիչ միջոցի կամ տրանկվիլիզատորի ձեռք բերման այս երկու եղանակներն են, թերևս, հիմնական (առանցքային) տարբերակները, քանզի հարցաթերթում նշված մյուս՝ «ծանոթից» և «այլ» տարբերակների տեսակարար կշիռները միասին կազմել են 4,4 տոկոս (հավելված 2, աղյուսակներ 35, 36):

Ապօրինի թմրամիջոցներ.....

Ինչպես արդեն նշվել է, հետազոտության հարցաթերթը պարունակում էր նաև հարցեր ապօրինի թմրամիջոցների օգտագործման և դրա տարածվածության վերաբերյալ: Այս բաժնի հարցադրումներով ստացված արդյունքներին, թերևս, պետք է վերաբերել այն վերապահումով, որ դրանց սենսիթիվության հանգամանքով պայմանավորված, վերջիններս կարող են չարտացոլել երևույթի խորությունը: Այդ նկատառումով է, թերևս, պայմանավորվել նաև այն հանգամանքը, որ հարցաթերթի այդ բաժնի յուրաքանչյուր ենթաբաժինը պարունակել է երկու տարբեր բովանդակությամբ հարցադրում՝ «Դուք անձամբ ճանաչո՞ւմ եք թմրամիջոց (ըստ տեսակների) օգտագործող անձանց» և «Դուք թմրամիջոց (ըստ տեսակների) երբևէ օգտագործե՞լ եք»:

Ըստ այդմ, այդ երկու հարցադրման արդյունքներով ստացվել են բավական ուշագրավ պատասխաններ: Ստացված պատասխանները, որպես հարցվածների ընդհանուր թվաքանակի (3892) նկատմամբ տոկոսային արտահայտություն, արտացոլված են ստորև բերված գծապատկեր 7-ում:

Գծապատկեր 7. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ թմրամիջոց օգտագործող անձանց ճանաչելու հայտանիշի (տոկոսով ընդամենի նկատմամբ)



Ինչպես ակներևում է վերը բերված գծապատկեր 7-ից հարաբերականորեն բարձր է հաշիշ կամ մարիխուանա օգտագործող անձանց ճանաչողների տեսակարար կշիռը (5,4 տոկոս), որին հաջորդում են կոկաին (0,9 տոկոս) և հերոին (0,6 տոկոս) օգտագործող անձանց ճանաչող հարցվածների տեսակարար կշիռները: Ուշագրավ է, որ ըստ տարիքային խմբերի և թմրամիջոցների առանձին տեսակների բաշխվածության դի-

տարկելու պարագայում, հարաբերականորեն բարձր տեսակարար կշիռներն ունեցել են որոշակի առանձնահատկություններ: Այսպես՝ հաշիշ կամ մարիխուանա օգտագործող անձանց ճանաչողների տեսակարար կշիռը հարաբերականորեն բարձր է եղել 45-54 (տվյալ խմբի 29,5 տոկոսը) և 35-44 (տվյալ խմբի 22,4 տոկոսը) տարիքային խմբերում, կոկաինը և հերոինը՝ 45-54 (համապատասխանաբար 25,7 տոկոս և 33,3 տոկոս) և 25-34 (համապատասխանաբար՝ 22,9 տոկոս և 29,2 տոկոս), ամֆետամինները՝ 25-34 (37,5 տոկոս) և 45-54 (25,0 տոկոս), իսկ էքստազին՝ 16-24 (30,0 տոկոս) և 25-34 (25,0 տոկոս) տարիքային խմբերում: Հարցվածների ընդհանուր թվաքանակում գերակայող են եղել տղամարդկանց պատասխանները: Ըստ մարզային բաշխվածության դիտարկելու պարագայում հաշիշ կամ մարիխուանա ու կոկաին օգտագործողների ճանաչողների տեսակարար կշիռներն առավել բարձր են եղել այլ մարզերում (համապատասխանաբար՝ 82,9 տոկոսը և 74,3 տոկոսը), իսկ էքստազի և ամֆետամիններ օգտագործողների ճանաչողներինը՝ Երևանում (համապատասխանաբար՝ 55,0 տոկոս և 62,5 տոկոս) (հավելված 2, աղյուսակներ 37, 38, 39 և 40):

Ի հակադրություն վերը բերված ցուցանիշների, հարցվածների կողմից թմրամիջոցի օգտագործման վերաբերյալ հարցադրմանն ի պատասխան դրական պատասխան է տրվել թվով 25 հարցվածի կողմից, այդ թվում՝ հաշիշ կամ մարիխուանա են օգտագործել 19-ը, կոկաին՝ 4-ը, իսկ հերոին՝ 2-ը: Հաշիշի առնելով պատասխանների վերջին երկու տարբերակների արդյունքներով ստացված աննշան մեծությունները՝ սույն հաշվետվության առումով դրանց վերլուծությունը նպատակահարմար չի համարվում: Ինչ վերաբերում է հաշիշ կամ մարիխուանա օգտագործածների թվաքանակին, ապա վերջիններից 18-ը տղամարդ է, 1-ը՝ կին: Ընդ որում, հաշիշ կամ մարիխուանա օգտագործածների 36,8 տոկոսը եղել է 25-34 տարիքային խմբում, իսկ ըստ մարզերի դիտարկելու պարագայում, «այլ մարզեր» համակցությունը կազմել է 78,9 տոկոս (հավելված 2, աղյուսակներ 41, 42):


Ուշագրավ է այն, որ ըստ հարցման արդյունքների հարցվածներից և ոչ մեկը վերջին մեկ տարվա ընթացքում թմրամիջոց չի օգտագործել, իսկ ինչ վերաբերում է առաջին անգամ օգտագործելու տարիքին, ապա հաշիշ կամ մարիխուանա օգտագործած բոլոր հարցվածներն այն օգտագործել են 16-25 տարեկանում (հավելված 2, աղյուսակ 43):

Վերաբերմունքը

Հետազոտության հարցաթերթը հնարավորություն է ընձեռել նաև պարզել հարցվածների տեսակետները ծխախոտի, ալկոհոլի և թմրամիջոցների ներգործության վերաբերյալ, ինչպես նաև ստացված պատասխանների հիման վրա գնահատել հարցվածների կողմից այս կամ այն երևույթի ռիսկայնության վերաբերյալ պատկերացումները: Ըստ այդմ, հատկանշական է, որ որոշակի երևույթների վերաբերյալ հարցվածների կողմից տրված պատասխանները դրևորել են տարաբևեռ միտումներ և բնութագրվել ներքոշարադրյալ կերպ:

Հարցվածների կողմից «Դուք թմրամոլին համարում եք ավելի շատ որպես հանցագործ, թե՞ հիվանդ» հարցադրմանը տրված պատասխանները բնութագրվել են գծապատկեր 8-ում բերված համամասնություններով:

Գծապատկեր 8. Հարցվածների կողմից տրված պատասխանների բաշխումն ըստ «Դուք թմրամոլին համարում եք ավելի շատ որպես հանցագործ, թե՞ հիվանդ» արտահայտության նկատմամբ տեսակետի




Ինչպես երևում է վերը բերված գծապատկեր 8-ից թմրամոլին առավելապես որպես հիվանդ է համարել հարցվածների 38,3 տոկոսը, իսկ 29,8 տոկոսը՝ և՛ որպես հանցագործ և՛ որպես հիվանդ: Ընդ որում ուշագրավ է այն, որ ո՛չ որպես հանցագործ և ո՛չ էլ որպես հիվանդ տարբերակն է ընտրել հարցվածների 5,0 տոկոսը, իսկ 14,5 տոկոսը չեն կողմնորոշվել (կամ դժվարացել են պատասխանել) (հարցաթերթը նման հարցադրում չի պարունակել) (հավելված 2, աղյուսակներ 44, 45):

Ի տարբերություն վերը նշված հարցադրման, հարցվածների բացարձակ մեծամասնությունն ընդհանուր առմամբ կամ ամբողջությամբ ժխտում է «Մարդկանց պետք է թույլատրել ընդունել հաշիշ կամ մարի-

խուման» տեսակետը (համաձայն չէ ամբողջությամբ՝ 67,1 տոկոս, համաձայն չէ ընդհանուր առմամբ՝ 25,3 տոկոս): Ընդ որում, նշված արտահայտությունը ժխտվում է թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց կողմից: Սակայն մյուս կողմից ուշագրավ է այն, որ ըստ մարզային բաշխվածության դիտարկելու պարագայում այլ մարզերի հարցվածների կողմից տրված պատասխաններում «համաձայն չէ ամբողջությամբ» տարբերակն ընտրածների տեսակարար կշիռը Երևանում հարցվածների համապատասխան տեսակարար կշիռը զիջում է 9,5 տոկոսային կետով, ինչն էլ իր հերթին «բաշխվել է» պատասխանների մյուս տարբերակների միջև, գերազանցելով Երևանի համապատասխան տեսակարար կշիռներին: Նշված պատասխանները թղթակցում են նաև հարցվածների կողմից մեկ այլ հարցադրմանը տրված պատասխանների հետ, համաձայն որոնց պարբերաբար մարիխուանա կամ հաշիշ օգտագործելը մեծ ռիսկ է համարել ընդամենի՝ 89,3 տոկոսը, իսկ ոչ ռիսկային՝ 0,8 տոկոսը (հավելված 2, աղյուսակներ 46, 47, 64 և 65):

Ուշագրավ է այն, որ ի տարբերություն ստորև բերված և էքստազիի կամ հերոինի մեկ կամ երկու անգամ օգտագործելուն առնչվող հարցադրումների պատասխանների արդյունքում ստացված «չեմ դատապարտում» պատասխանների հարաբերականորեն բարձր տեսակարար կշիռների համեմատությամբ «Ժամանակ առ ժամանակ մարիխուանա կամ հաշիշ օգտագործելը» գործողությունը չդատապարտողները կազմել են աննշան՝ 1,4 տոկոս (այդ թվում՝ կանայք՝ 0,8 տոկոս և տղամարդիկ՝ 2,3 տոկոս), իսկ մարզային բաշխվածությամբ՝ պատասխաններում երևույթը չդատապարտողների տեսակարար կշիռները գրեթե համընկել են և կազմել, համապատասխանաբար՝ Երևանում 1,2 տոկոս, այլ մարզերում՝ 1,5 տոկոս:


Գծապատկեր 9. Հարցվածների կողմից տրված պատասխանների բաշխումն ըստ «Մարդկանց պետք է թույլատրել ընդունել հաշիշ կամ մարիխուանա» արտահայտության նկատմամբ տեսակետի



Հարցվածների կողմից «Մարդկանց պետք է թույլատրել ընդունել հաշիշ կամ մարիխուանա» հարցադրմանը տրված պատասխանները բնութագրվել են գծապատկեր 9-ում բերված համամասնություններով:

Նմանաբնույթ պատկեր է ձևավորվել նաև «Մարդկանց պետք է թույլատրել ընդունել հերոին» արտահայտության վերաբերյալ ստացված պատասխաններով: Այսպես նշված տեսակետն ընդհանուր առմամբ կամ ամբողջությամբ ժխտել է հարցվածների 93,3 տոկոսը (այդ թվում՝ համապատասխանաբար՝ 23,4 տոկոս և 69,9 տոկոս): Ընդ որում, հատկանշական է, որ «համաձայն չէ ամբողջությամբ» և «ընդհանուր առմամբ համաձայն չէ» պատասխանների բաշխումն ըստ տեսակարար կշիռների ունեցել է որոշակի առանձնահատկություններ. կանանց շրջանում «համաձայն չէ» ամբողջությամբ պատասխանաձևների տեսակարար կշիռը նույն պատասխանը տված տղամարդկանց տեսակարար կշիռն գերազանցել է 10,3 տոկոսային կետով, իսկ «ընդհանուր առմամբ համաձայն չէ» պատասխանաձևներինը, հակառակը, ցածր է եղել 6,4 տոկոսային կետով: Նմանաբնույթ տարբերությունները բնութագրական են նաև Երևան և այլ մարզեր բաշխվածության դեպքում. Երևան քաղաքում «համաձայն չէ ամբողջությամբ» պատասխանաձևների տեսակարար կշիռը գերազանցել է այլ մարզերի համապատասխան ցուցանիշը 11,0 տոկոսային կետով, իսկ «ընդհանուր առմամբ համաձայն չէ» պատասխանի պարագայում, հակառակը, զիջել՝ 7,3 տոկոսային կետով: Ուշագրավ է նաև այն, որ Երևան քաղաքում հարցվածների շրջանում «համաձայն է ամբողջությամբ» պատասխանաձևներ չեն եղել (հավելված 2, աղյուսակներ 48, 49, 52 և 53):

Գծապատկեր 10. Հարցվածների կողմից տրված պատասխանների բաշխումն ըստ «Չերոին փորձելը մեկ կամ երկու անգամ» արտահայտության նկատմամբ տեսակետի



Նույն պատկերն է նաև հերոինի մեկ կամ երկու անգամ փորձելուն առնչվող հարցադրումների պատասխանների բաշխվածության պարագայում:


գայում: Գործողությունը դատապարտում է հարցվածների 80,2 տոկոսը, իսկ չի դատապարտում՝ 3,1 տոկոսը:

Հարցվածների կողմից «Հերոին փորձելը մեկ կամ երկու անգամ» արտահայտությանը տրված պատասխանները բնութագրվել են գծապատկեր 10-ում բերված համամասնություններով (տես վերևում):

Համաձայն ստացված արդյունքների, երևույթը ոչ դատապարտելի համարողների տեսակարար կշիռները հարաբերականորեն բարձր են եղել տղամարդկանց (կանանց համապատասխան ցուցանիշը գերազանցել է 2,7 տոկոսային կետով), իսկ մարզերի պարագայում, Երևանում հարցվածների կողմից տրված պատասխանների արդյունքում ձևավորված տեսակարար կշիռը (այլ մարզերի համանման ցուցանիշը գերազանցում է 4 տոկոսային կետով):

Հարցվածների կողմից տրված՝ էքստագիի մեկ կամ երկու անգամ փորձելուն առնչվող պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ գործողությունը չի դատապարտել հարցվածների 4,3 տոկոսը, մինչդեռ 71,6 տոկոսն այն համարել է դատապարտելի: Պատասխանի նշված տարբերակը թղթակցում է նաև մեկ այլ հարցադրման հետ, համաձայն որի, հարցվածների 79,2 տոկոսը (այդ թվում՝ կանանց՝ 81,1 տոկոսը, տղամարդկանց՝ 77,0 տոկոսը) դա համարում է մեծ ռիսկ պարունակող, իսկ 2,0 տոկոսը՝ ոչ ռիսկային (այդ թվում՝ կանանց՝ 1,4 տոկոսը և տղամարդկանց՝ 2,7 տոկոսը): Ուշագրավ է այն, որ Երևան և այլ մարզեր բաշխվածությամբ դիտարկելու պարագայում մեկ կամ երկու անգամ փորձելը թեթև ռիսկային է համարել Երևանում հարցվածների 7,8 տոկոսը ու այլ մարզերում հարցվածների՝ 2,4 տոկոսը, իսկ ոչ ռիսկային՝ համապատասխանաբար 3,2 տոկոսը և 1,5 տոկոսը (հավելված 2, աղյուսակներ 50, 51, 66 և 67):

Գծապատկեր 11. Հարցվածների կողմից տրված պատասխանների բաշխումն ըստ «Էքստագի փորձելը մեկ կամ երկու անգամ» արտահայտության նկատմամբ տեսակետի




Հարցվածների կողմից «Էքստագի փորձելը մեկ կամ երկու անգամ» արտահայտությանը տրված պատասխանները բնութագրվել են գծապատկեր 11-ում բերված համամասնություններով (տես վերևում):

Անկախ նշվածից, համաձայն ստացված արդյունքների, երևույթը ոչ դատապարտելի համարողների տեսակարար կշիռները հարաբերականորեն բարձր են եղել տղամարդկանց (կանանց համապատասխան ցուցանիշը գերազանցել է 3,3 տոկոսային կետով) շրջանում, իսկ մարզերի պարագայում, Երևանի հարցվածների կողմից տրված պատասխանների արդյունքում ձևավորված տեսակարար կշիռը գերազանցել է այլ մարզերի համանման ցուցանիշին 6,5 տոկոսային կետով:

Ի տարբերություն վերը նկարագրվածի ուշարժան է այն, որ բոլորովին տարբեր պատասխաններ են ստացվել ծխախոտի և ալկոհոլի օգտագործմանն առնչվող հարցադրումներին ստացված պատասխանների մասով, որտեղ արդեն գերակայում է «չեմ դատապարտում» տարբերակը: Այսպես, «օրական տաս կամ ավելի գլանակ ծխելը» չի դատապարտել հարցվածների 44,5 տոկոսը (այդ թվում՝ կանանց՝ 32,2 տոկոսը և տղամարդկանց՝ 59,0 տոկոսը): Ինչպես ցույց է տալիս ստացված արդյունքների վերլուծությունը, նշված երևույթն առավելապես դատապարտում են կանայք (պատասխանների՝ «դատապարտում է» և «դատապարտում է խիստ») տարբերակները համատեղ կազմել են ընդամենի 57,6 տոկոս), մինչդեռ տղամարդկանց կողմից տրված «չեմ դատապարտում» պատասխանը գերազանցում է վերջինիս 1,4 տոկոսային կետով: Ըստ մարզային բաշխվածության դիտարկելու պարագայում, երևույթը չդատապարտողների տեսակարար կշիռները հարաբերականորեն բարձր են եղել Երևանում և կազմել՝ 48,3 տոկոս (այլ մարզերում՝ 42,8 տոկոս): Նշված ցուցանիշների տրամաբանությունը թերևս հիմնավորվում է նաև մեկ այլ՝ «Օրական մեկ տուփից ավել սիգարետ օգտագործելու» ռիսկայնության վերաբերյալ հարցադրմանը տրված պատասխանների վերլուծությամբ: Այսպես, եթե երևույթը մեծ ռիսկ է համարել կանանց 45,3 տոկոսը, ապա տղամարդկանց կողմից տրված պատասխաններն ըստ ռիսկայնության (թեթև, միջին, մեծ) ունեցել են գրեթե հավասար բաշխում և գտնվել 26,2-28,0 տոկոսի միջակայքում: Ըստ մարզային բաշխվածության՝ օրական մեկ տուփից ավելի սիգարետ օգտագործելը ոչ ռիսկային է համարել Երևանում հարցվածների՝ 8,6 տոկոսը և այլ մարզերում՝ 15,7 տոկոսը (հավելված 2, աղյուսակներ 54, 55, 60 և 61):

Հարցվածների կողմից «Տաս կամ ավելի գլանակ սիգարետ ամեն օր ծխելը» արտահայտությանը տրված պատասխանները բնութագրվել են գծապատկեր 12-ում բերված համամասնություններով:

Գծապատկեր 12. Հարցվածների կողմից տրված պատասխանների բաշխումն ըստ «Տաս կամ ավելի գլանակ սիգարետ ամեն օր ծխելը» արտահայտության նկատմամբ տեսակետի



Նույն պատկերն է նաև ակտիոլի օգտագործման պարագայում: Այսպես՝ շաբաթվա ընթացքում մեկ կամ երկու անգամ ակտիոլ օգտագործելը չի դատապարտել հարցվածների 66,2 տոկոսը, այդ թվում՝ կանանց 56,8 տոկոսը և տղամարդկանց՝ 77,4 տոկոսը: Ուշագրավ է այն, որ երևույթը չդատապարտողների տեսակարար կշիռը Երևան քաղաքում այլ մարզերի համապատասխան ցուցանիշին գերազանցել է 8,3 տոկոսային կետով և կազմել է 72,0 տոկոս: Նշված պատասխանները մեկ այլ «Հանգստյան օրերին հինգ և ավելի անգամ խմելու» ռիսկայնության վերաբերյալ պատասխանների հետ համեմատելով՝ թերևս կարելի է ենթադրել, որ հարցվածները, ակտիոլ օգտագործում են բավական քիչ քանակությամբ, քանզի հանգստյան օրերին հինգ և ավելի անգամ օգտագործելը ոչ ռիսկային է համարել հարցվածների ընդամենի սոսկ 11,6 տոկոսը (այդ թվում՝ կանանց՝ 8,9 տոկոսը, տղամարդկանց՝ 14,7 տոկոսը), իսկ մարզային բաշխվածությամբ՝ պատասխանների միջև էական տարբերություններ չեն եղել (հավելված 2, աղյուսակներ 56, 57, 62 և 63):

Քննարկում

Այս տիպի ուսումնասիրություն Հայաստանում իրականացվում է առաջին անգամ, այդ պատճառով անհնար է համեմատել ներկա տվյալներն անցյալի հետի (բացառությամբ ծխախոտի, այն էլ որոշ վերապահումներով): Հարկ է նշել նաև, որ հետազոտության հարցաթերթում առկա որոշ հարցադրումների (հատկապես՝ թմրամիջոցների) սենսիթիվության հանգամանքով պայմանավորված, հնարավոր է, որ հարցվածների կողմից այդ հարցադրումներին տրված պատասխանները հնարավորություն չտան ամբողջական պատկերացում կազմել այս կամ այն երևույթի խորության վերաբերյալ: Այնուամենայնիվ, հետազոտությունը հնարավորություն է տալիս վերլուծել ներկա իրավիճակը:

Ծխախոտ

Համաձայն հետազոտության արդյունքների՝ հարցման պահի դրությամբ ծխախոտ օգտագործել է հարցման ենթարկվածների 28,4 տոկոսը:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից նախկինում իրականացված «Ծխախոտի սպառման հետազոտությունը»⁴ պարունակել է տեղեկատվություն ծխախոտի օգտագործման տարածվածության վերաբերյալ: Ուշագրավ է ստացված տվյալների համեմատությունը 1999թ. իրականացված վերոնշյալ հետազոտության հետ: Ըստ այդմ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծխախոտի սպառման հետազոտության ժամանակ հարցման մեջ ընդգրկվել է 16-75 տարեկանների տարիքային խումբը, ապա ցուցանիշների համադրելիության ապահովման նպատակով նպատակահարմար է դիտարկել այդ նույն տարիքային խումբը: Այսպես, համաձայն ծխախոտի սպառման հետազոտության արդյունքների՝ 1999թ. ծխախոտ է օգտագործել հարցված 16-75 տարեկան բնակչության 29,0 տոկոսը, այդ թվում՝ տղամարդկանց՝ 63,7 և կանանց 1,24 տոկոսը, իսկ սույն հետազոտության արդյունքներով՝ համապատասխան ցուցանիշները կազմել են (16-75 տարեկանների համար) համապատասխանաբար 29,0%, 60,5% և 2,2%: Եթե նախորդ հետազոտության համեմատությամբ ծխախոտ օգտագործողների ընդհանուր տեսակարար կշիռը մնացել է գրեթե անփոփոխ՝ 29 տոկոս, ապա փոփոխություններ են ար-

⁴ Ազգային վիճակագրական ծառայություն, 2001

ձանագրվել տղամարդկանց և կանանց տեսակարար կշիռների կառուցվածքում, մասնավորապես, տղամարդկանց տեսակարար կշիռը նվազել է, իսկ կանանցն՝ աճել:

Ալկոհոլ

Հետազոտության հարցաթերթը հնարավորություն է տվել տեղեկատվություն ստանալ նաև հարցվածների կողմից ալկոհոլի օգտագործման և դրա հաճախականության վերաբերյալ:

Համաձայն ստացված արդյունքների՝ բնակչության մի զգալի մասը ժամանակ առ ժամանակ ալկոհոլ օգտագործում է: Ցավոք Հայաստանում նախկինում նմանատիպ հետազոտություններ չեն կատարվել, այդ պատճառով էլ հնարավոր չէ համեմատություններ անել: Սակայն հետազոտությունը հնարավորություն է տալիս վերլուծության արդյունքում մի շարք բացասական իրողություններ արձանագրել:

Չնայած ըստ սեռատարիքային բաշխվածության ալկոհոլ օգտագործածների տեսակարար կշիռն առավել ցածր է եղել 16-24 տարեկանների մոտ, սակայն այն պետք է բավականին բարձր ցուցանիշ համարել (ըստ վերջին 1 տարվա ընթացքում ալկոհոլ օգտագործելու հայտանիշի՝ 36,4%, և ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ ալկոհոլի օգտագործման հաճախականության շաբաթը 4 անգամ կամ ավելի հաճախ՝ 1,2%, շաբաթը 2-3 անգամ՝ 3,2%, ամիսը 2-4 անգամ՝ 18,5%, ամիսը մեկ անգամ կամ ավելի հազվադեպ՝ 77,1%):

Համաձայն ստացված արդյունքների, հարցման պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ալկոհոլ է օգտագործել հարցվածների տասից յոթը, այդ թվում՝ կանանցից մոտավորապես ամեն երկրորդը և տղամարդկանցից՝ տասից ութը:

Ուշադրության արժանի է նաև ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ միևնույն ժամանակ/դեպքում վեց բաժակից ավելի ալկոհոլ օգտագործելու հայտանիշի: Ալկոհոլ օգտագործողների 1/3-ը նշել է, որ միևնույն ժամանակ վեց բաժակից ավելի ալկոհոլ է օգտագործում: Վերոհիշյալի տեսակարար կշիռն առավել բարձր են եղել Հայաստանի այլ մարզերում: Այդ դեպքում ուշադրության արժանի է 16-24 տարիքային խումբը. եթե, օրինակ, Երևանում մեկ օր կամ գրեթե ամեն օր վեց բաժակից ավելի ալկոհոլի օգտագործման դեպքեր չեն արձանագրվել, ապա այլ մարզերում այն կազմել է 1,7% (արական սեռ):

Դեղամիջոցներ.....

Համաձայն ստացված արդյունքների՝ հարցմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր է օգտագործել հարցվածների յուրաքանչյուր տասերորդը: Ըստ սեռատարիքային խմբերի դիտարկելու պարագայում հանգստացուցիչ միջոցի կամ տրանկվիլիզատորի օգտագործումն առավելապես բնորոշ է եղել կանանց: Հարցվածների մոտ կեսը հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործում է ամիսը մեկ անգամ կամ ավելի հազվադեպ:

Հարցմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր է օգտագործել հարցվածների տասից յոթը: Ըստ մարզային բաշխվածության, նշված տեսակարար կշիռն առավել բարձր է եղել Երևանում՝ տասից ութը, մինչդեռ ՀՀ մարզերում եղել է ավելի ցածր: Երևան և այլ մարզեր համակցություններն առանձին ըստ սեռի դիտարկելու պարագայում ակներև է, որ Երևան քաղաքում հարցված և վերջին մեկ ամսվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործածների տեսակարար կշիռն արական սեռի ներկայացուցիչների մոտ գրեթե 30 տոկոսային կետով գերազանցել է ՀՀ մարզերի համապատասխան ցուցանիշը: Վերոհիշյալն ահազանգող երևույթ կարելի է համարել: Հարկ է ուշադրություն դարձնել նաև այն փաստին, որ 16-24 տարիքային խմբում շատ բարձր է հարցմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործածների թիվը: Ըստ հաճախականության բարձր տեսակարար կշիռ է ունեցել հարցմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում մինչև 9 օր հաճախականությամբ օգտագործողները՝ 65%:

Հետազոտությամբ ստացված արդյունքների համաձայն, հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր օգտագործողների ընդամենը մեկ չորրորդն է այն ձեռք բերում բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսով: Հարկ է նշել, որ օգտագործողների մեծամասնությունը՝ տասից յոթը, այն ձեռք է բերում դեղատոմսից՝ առանց դեղատոմսի և, որ ամենաանկառավարելի է, մի մասի համար դեղամիջոցը դառնում է հասանելի այլ ճանապարհով՝ «ծանոթից» և «այլն»:

Ապօրինի թմրամիջոցներ.....

Այս բաժնի հարցադրումներով ստացված արդյունքների մասով, ինչպես արդեն նշվել է, առկա են որոշակի վերապահումներ՝ կապված երևույթի քրեականորեն պատժելի բնույթ ունենալու հատկանիշի հետ:

Ուղղակի հարցադրումներին («Դուք օգտագործե՞լ եք թմրամիջոց») տրված պատասխաններն ունեցել են բավական աննշան արժեմեծություններ, մինչդեռ այլ արդյունքներ են ստացվել «Դուք անձամբ ճանաչու՞մ եք թմրամիջոց օգտագործող անձի» հարցադրմանը տրված պատասխաններին:

Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ թմրամիջոց օգտագործող անձանց ճանաչելու հայտանիշի վկայում է, որ հարաբերականորեն բարձր է հաշիշ կամ մարիխուանա օգտագործող անձանց ճանաչողների տեսակարար կշիռը (5,4 տոկոս), որին հաջորդում են կոկաին (0,9 տոկոս) և հերոին (0,6 տոկոս) օգտագործող անձանց ճանաչող հարցվածների տեսակարար կշիռները: Ուշագրավ է, որ այս պատկերը Եվրոպական երկրների ցուցանիշների հետ համեմատելու պարագայում կառուցվածքային առումով որոշակի նմանություններ կարելի է դիտարկել: Ցուցանիշները համեմատելիս տարբերությունն ակնհայտ է (հաշիշ կամ մարիխուանա 10-25%, կոկաին 0,5-3%, հերոին <1%)⁵: Հարցվածների կողմից թմրամիջոցի օգտագործման վերաբերյալ հարցադրմանը դրական պատասխանողների գերակշիռ մեծամասնությունը հաշիշ կամ մարիխուանա են օգտագործել: Սակայն հարկ է նշել, որ այլ պատասխաններ նույնպես եղել են: Կարևոր է այն հանգամանքը, որ հաշիշ կամ մարիխուանա օգտագործած բոլոր հարցվածներն այն առաջին անգամ օգտագործել են 16-25 տարեկանում: Հարկ է նշել, որ թմրամիջոցի օգտագործման վերաբերյալ հարցադրմանը դրական պատասխանողների շարքում եղել են նաև կանայք, ինչը գուցե օրինաչափություն չէ, սակայն մտորելու տեղիք է տալիս:

Վերաբերմունքը

Հետազոտության հարցաթերթը հնարավորություն է ընձեռել նաև պարզել հարցվածների գիտելիքները ծխախոտի, ալկոհոլի և թմրամիջոցների ներգործության վերաբերյալ, ինչպես նաև ստացված պատասխանների հիման վրա գնահատել հարցվածների կողմից այս կամ այն երևույթի ռիսկայնության վերաբերյալ պատկերացումները և ընդհանուր առմամբ մեզ հնարավորություն է տալիս պարզել բնակչության իրագրականության աստիճանը: Հատկանշական է, որ որոշակի երևույթների

⁵ Доклад о состоянии здравоохранения в Европе 2002г, Евро.Бюро ВОЗ, Копенгаген. Стр 88

վերաբերյալ հարցվածների կողմից տրված պատասխանները եղել են բավականին տարբեր:

Հարցվածների կողմից «Դուք թմրամոլին համարում եք ավելի շատ որպես՞ս հանցագործ, թե՞ հիվանդ» հարցադրմանը վերաբերմունքը եղել է հետևյալը՝ հարցվածների մեծ մասն ի դեմս թմրամոլի տեսնում է հիվանդի (հարցվածների 68,1%): Այդ մարդկանց մի մասը (29,8%) համարում է թմրամոլին և՛ հիվանդ, և՛ հանցագործ, տասից մեկն է ընդամենը թմրամոլին որպես հանցագործ դիտարկում: Պետք է նշել նաև, որ 14 տոկոսից ավելին դժվարացել է պատասխանել այս հարցին:

Հարցվածների ճնշող մեծամասնությունը մեծամասամբ կամ ամբողջությամբ ժխտում է «Մարդկանց պետք է թույլատրել ընդունել հաշիշ կամ մարիխուանա» տեսակետը: Սա ինքնին շատ կարևոր փաստ է:

Նման պատկեր է ստացվել նաև «Մարդկանց պետք է թույլատրել ընդունել հերոին» և նմանատիպ այլ հարցերի վերաբերյալ:

Հարցվածների «Էքստրազի փորձելը մեկ կամ երկու անգամ» արտահայտության վերաբերյալ տեսակետները մի փոքր այլ են և մտորելու տեղիք են տալիս. հարցվածների մոտ մեկ քառորդը չգիտի, թե ինչպես վերաբերվի այդ երևույթին: Մտահոգվելու տեղիք է տալիս նաև այն հանգամանքը, որ նրանց մեջ բավականին մեծ տեղ է գտել 16-24 տարեկանների մասնաբաժինը:

Հարցվածների վերաբերմունքն ակոհոլի և ծխախոտի նկատմամբ շատ ավելի «լիբերալ» է: Հնարավոր է, որ վտանգը դերևս անհասանելի է թվում: Օրինակ՝ «օրական տաս կամ ավելի գլանակ ծխելը» չի դատապարտել հարցվածների մոտավորապես կեսը: «Օրական մեկ տուփից ավել սիգարետ օգտագործելու» մեջ շիսկ են տեսնում հարցվածների 86,5 տոկոսը, իսկ մնացածը դա շիսկ չեն համարել:

Նույն պատկերն է նաև ակոհոլի օգտագործման պարագայում:

Ամփոփում և առաջարկներ

«Չափահասների շրջանում տարածված թմրամիջոցներ» սոցիոլոգիական հարցման ընացքում փորձ է կատարվել դիտարկել հարցերի բավական լայն շրջանակ մեկ հարցման մեջ: Մեր հասարակության ներկա անցումային փուլում չափահասների շրջանում ծխախոտի, ալկոհոլի, դեղամիջոցների և ապօրինի թմրամիջոցների տարածման հիմնախնդիրը, հասարակության վերաբերմունքը, դեղամիջոցների մատչելիությունը, դրանց վերաբերյալ իրազեկությունը ոչ միայն առողջապահության ոլորտի աշխատակիցների ուշադրության կենտրոնում են, այլև քաղաքականություն մշակողների, հասարակական առողջության ջատագովների և այլ շահառուների: Քանզի այս հարցումն առաջինն է, և դեռևս եզակի փորձ է, վերլուծողի խնդիրը միաժամանակ և՛ պարզ է, և՛ բարդ: Պարզ է, որովհետև բացի ծխախոտի վերաբերյալ հատվածի, հարցման մյուս մասերի վերաբերյալ տվյալներն ընդհանրապես հնարավոր չէ համեմատել որևէ նախկին տվյալի հետ (նույնիսկ խորհրդային ժամանակների): Այսպիսով, այստեղ համեմատական վերլուծություն չի կատարվել: Այնուամենայնիվ, հարցման արդյունքում ստացվել է բավականին լուրջ վիճակագրական նյութ, որը բաժանվել է ըստ մի շարք կատեգորիաների (սեռ, տարիք, և այլն) և դրանց համակցման: Այսպիսով, նման եզակի աշխատանքը հավակնում է հատուկ ուշադրության: Անհրաժեշտ է այն քննարկել, քաղաքականություն մշակողների համար ստեղծել առաջարկների փաթեթ և համակարգել ստացված տվյալները՝ որպես նախնական վերլուծական նյութ հետագա հարցումների և հետազոտությունների համար:

Նշենք, որ հարցման արդյունքները ներկայացված են նաև հետևյալ ինտերնետ կայքերում.

- <http://www.ichd.org>,
- <http://www.tobaccocontrol.ichd.org>,
- <http://www.armenia.globalink.org>,
- <http://www.armstat.am>.

Ինչ վերաբերում է ծխախոտի բաժնին, անհրաժեշտ է նշել, որ ծխելու խնդիրը հանրային առողջապահության պաշտոնյաների ու ջատագովների ուշադրության կենտրոնում է և արդեն իսկ հավաքվել ու վերլուծվել են որոշ տեղեկություններ և ուսումնասիրություններ այս հարցի շուրջ:

Դեռ խորհրդային ժամանակներից Հայաստանում ալկոհոլը լուրջ կամ անհանգստացնող խնդիր չի եղել, թեև այն միշտ եղել է գինիներ և կոնյակ արդադրող երկիր: Այնուամենայնիվ, հարցման արդյունքները թույլ տվեցին նշանակել որոշ միտումներ, որոնց անհրաժեշտ է հրավիրել առողջա-

պահական համակարգի աշխատակիցների և քաղաքականության մշակողների ուշադրությունը: Նման միտումներից է այն փաստը, որ ալկոհոլը լայն տարածում է ստանում հարցմանը մասնակցած ամենաերիտասարդ տարիքային խմբում՝ 16-24 տարեկանների շրջանում:

Հարցումը ցույց տվեց նաև, որ դեղամիջոցները (հանգստացուցիչ միջոց կամ տրանկվիլիզատոր) բավականին մատչելի են հասարակության համար. հարցվողների մեծ մասը նման դեղամիջոցներ ձեռք է բերում առանց բժշկի նշանակման: Կան նաև այլ միտումներ, որոնք առանձնահատուկ ուշադրություն են պահանջում, սակայն սա ամենահրատապն է:

Վերադառնալով ապօրինի թմրամիջոցներին՝ պետք է նշել, որ Հայաստանի օրենսդրությունն այս ասպարեզում բավականին խիստ է, ինչը հարցման այս հատվածի վերաբերյալ հարցերը պատասխանողների համար բավականին զգայուն է դարձնում: Ի լրումն, հասարակության ավանդաբար բացասական վերաբերմունքը թմրամոլների նկատմամբ թույլ է տալիս ձևավորել այն համոզմունքը, թե այս հարցը պետք է ավելի նպատակային ուսումնասիրվի: Դա հնարավորություն կընձեռի վեր հանել լրացուցիչ տեղեկություններ և վիճակագրական տվյալներ: Ուրախությամբ պետք է նշել, որ հարցման մեջ նման խնդիր բարձրացվել է:

Հարցման հիման վրա մշակվել են հետևյալ առաջարկները՝

- Քանզի հարցումը ցույց տվեց, որ տղամարդ հարցվողների մեջ ծխողների տոկոսը բավականին բարձր է (թեև անցյալի համեմատ այդ թիվը նվազել է), իսկ կանանց մոտ նկատվում է աճի միտում, առաջարկվում է շարունակել համաձայնեցված միջոցառումները, որոնց նպատակն է անշեղորեն կրճատել ծխելու պրակտիկան:

- Այնպիսի քաղաքականության մշակում, որի նպատակն է կրճատել ալկոհոլի մատչելիությունը երիտասարդների համար: Ալկոհոլի վաճառքի տարիքային սահմանափակման ներմուծում:

- Առողջապահական կրթական ծրագրերի մշակում, որոնց նպատակն է բարձրացնել ալկոհոլի վտանգների և բացասական հետևանքների վերաբերյալ հասարակության իրազեկության մակարդակը:

- Առանց բժշկի նշանակման հանգստացուցիչների և տրանկվիլիզատորների մատչելիության սահմանափակման նպատակով հստակ քայլերի մշակում:

- Թմրամիջոցների վերաբերյալ օրենսդրության հետագա բարելավում, որի նպատակն է կանխել դրանց առքուվաճառքը և երկրի ներսում թմրամիջոցների հետ առնչվող գործունեությունը:

- Բնակչության տարբեր թիրախ հատվածների (հատկապես երիտասարդների) համար նախատեսված կրթական ծրագրերի ներմուծում՝ ապօրինի թմրամիջոցների աճող պահանջարկը կանխելու նպատակով:

- Ավելի երիտասարդ խմբերի (օրինակ՝ 13-15 տարեկան) շրջանում հարցումների իրականացում, որպեսզի պարզվի թմրամիջոցների և ալկոհոլի օգտագործման կամ փորձարկման ամենացածր մակարդակը:
- Բնակչության կոնկրետ թիրախ խմբերի (ռիսկային) համար թմրամիջոցների օգտագործման վերաբերյալ նեղ հարցումների իրականացում:
- Մոնիտորինգային համակարգի ներմուծում (Առողջապահության նախարարության և օրինապահ մարմինների կառույցներում), որը թույլ կտա վերահսկել թմրամիջոցների օգտագործման հետ կապված իրավիճակը և այդ վերահսկման արդյունքում հրատարակել զեկույցներ կամ համառոտագրեր:
- Առողջապահության համակարգում կառուցվածքային և գիտական բաժինների բարելավում, որը թույլ կտա անդրադառնալ հարցման մեջ քննարկված խնդիրներին (համաճարակաբանություն, բուժում և այլն):
- Ալկոհոլի և թմրամիջոցների վերահսկման միջազգային փորձի վերլուծություն, միջազգային մասնագիտական կազմակերպությունների և փորձագետների հետ համագործակցության հաստատում:
- Բնակչության հետ հասարակական կազմակերպությունների, մասնագիտական բժշկական կազմակերպությունների և ընդհանրապես առողջապահության ոլորտի աշխատակիցների աշխատանքների խթանում:

Ամփոփելով՝ առաջարկում ենք կանոնավոր հարցումներ իրականացնել հետազայում համապատասխան բնագավառներում իրավիճակը վերահսկելու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Աղյուսակ 1. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ տարիքային խմբերի՝ մարզերով

| Տարիքային խմբերը | Երևան | Այլ մարզեր | Ընդամենը |
|-----------------------------|--------------|-------------------|-----------------|
| Ընդամենը, այդ թվում՝ | 1173 | 2719 | 3892 |
| | 30.1% | 69.9% | 100.0% |
| | 100.0% | 100.0% | 100.0% |
| <i>16-24</i> | 205 | 479 | 684 |
| | 30.0% | 70.0% | 100.0% |
| | 17.5% | 17.6% | 17.6% |
| <i>25-34</i> | 198 | 418 | 616 |
| | 32.1% | 67.9% | 100.0% |
| | 16.9% | 15.4% | 15.8% |
| <i>35-44</i> | 197 | 543 | 740 |
| | 26.6% | 73.4% | 100.0% |
| | 16.8% | 20.0% | 19.0% |
| <i>45-54</i> | 256 | 550 | 806 |
| | 31.8% | 68.2% | 100.0% |
| | 21.8% | 20.2% | 20.7% |
| <i>55-64</i> | 112 | 258 | 370 |
| | 30.3% | 69.7% | 100.0% |
| | 9.5% | 9.5% | 9.5% |
| <i>65 և բարձր</i> | 205 | 471 | 676 |
| | 30.3% | 69.7% | 100.0% |
| | 17.5% | 17.3% | 17.4% |

Աղյուսակ 2. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբերի՝ մարզերով

| Սեռը և տարիքային խմբերը | Երևան | Այլ մարզեր | Ընդամենը |
|---|--------------|-------------------|-----------------|
| Իգական, ընդամենը, այդ թվում՝ | 667 | 1449 | 2116 |
| | 31.5% | 68.5% | 100.0% |
| | 100.0% | 100.0% | 100.0% |
| <i>16-24</i> | 114 | 246 | 360 |
| | 31.7% | 68.3% | 100.0% |
| | 17.1% | 17.0% | 17.0% |
| <i>25-34</i> | 106 | 229 | 335 |
| | 31.6% | 68.4% | 100.0% |
| | 15.9% | 15.8% | 15.8% |
| <i>35-44</i> | 110 | 294 | 404 |
| | 27.2% | 72.8% | 100.0% |
| | 16.5% | 20.3% | 19.1% |
| <i>45-54</i> | 138 | 281 | 419 |
| | 32.9% | 67.1% | 100.0% |
| | 20.7% | 19.4% | 19.8% |
| <i>55-64</i> | 69 | 136 | 205 |
| | 33.7% | 66.3% | 100.0% |
| | 10.3% | 9.4% | 9.7% |
| <i>65 և բարձր</i> | 130 | 263 | 393 |
| | 33.1% | 66.9% | 100.0% |
| | 19.5% | 18.2% | 18.6% |
| Արական, ընդամենը, այդ թվում՝ | 506 | 1270 | 1776 |
| | 28.5% | 71.5% | 100.0% |
| | 100.0% | 100.0% | 100.0% |
| <i>16-24</i> | 91 | 233 | 324 |
| | 28.1% | 71.9% | 100.0% |
| | 18.0% | 18.3% | 18.2% |
| <i>25-34</i> | 92 | 189 | 281 |
| | 32.7% | 67.3% | 100.0% |
| | 18.2% | 14.9% | 15.8% |
| <i>35-44</i> | 87 | 249 | 336 |
| | 25.9% | 74.1% | 100.0% |
| | 17.2% | 19.6% | 18.9% |
| <i>45-54</i> | 118 | 269 | 387 |
| | 30.5% | 69.5% | 100.0% |
| | 23.3% | 21.2% | 21.8% |
| <i>55-64</i> | 43 | 122 | 165 |
| | 26.1% | 73.9% | 100.0% |
| | 8.5% | 9.6% | 9.3% |
| <i>65 և բարձր</i> | 75 | 208 | 283 |
| | 26.5% | 73.5% | 100.0% |
| | 14.8% | 16.4% | 15.9% |

Աղյուսակ 3. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ կրթական մակարդակի՝ մարզերով

| Կրթական մակարդակը | Երևան | Վյլ մարզեր | Ընդամենը |
|-----------------------------------|--------------|-------------------|-----------------|
| Ընդամենը, այդ թվում՝ | 1173 | 2719 | 3892 |
| | 30.1% | 69.9% | 100.0% |
| | 100.0% | 100.0% | 100.0% |
| <i>ոչ տառաճանաչ</i> | 1 | 17 | 18 |
| | 5.6% | 94.4% | 100.0% |
| | 0.1% | 0.6% | 0.5% |
| <i>չունի տարրական</i> | 2 | 10 | 12 |
| | 16.7% | 83.3% | 100.0% |
| | 0.2% | 0.4% | 0.3% |
| <i>տարրական</i> | 16 | 130 | 146 |
| | 11.0% | 89.0% | 100.0% |
| | 1.4% | 4.8% | 3.8% |
| <i>հիմնական ընդհանուր</i> | 58 | 276 | 334 |
| | 17.4% | 82.6% | 100.0% |
| | 4.9% | 10.2% | 8.6% |
| <i>միջնակարգ (լրիվ) ընդհանուր</i> | 348 | 1141 | 1489 |
| | 23.4% | 76.6% | 100.0% |
| | 29.7% | 42.0% | 38.3% |
| <i>նախնական մասնագիտական</i> | 26 | 104 | 130 |
| | 20.0% | 80.0% | 100.0% |
| | 2.2% | 3.8% | 3.3% |
| <i>միջին մասնագիտական</i> | 262 | 627 | 889 |
| | 29.5% | 70.5% | 100.0% |
| | 22.3% | 23.1% | 22.8% |
| <i>բարձրագույն</i> | 460 | 414 | 874 |
| | 52.6% | 47.4% | 100.0% |
| | 39.2% | 15.2% | 22.5% |

Աղյուսակ 4. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ սեռի և կրթական մակարդակի՝ մարզերով

| Սեռը և կրթական մակարդակը | Երևան | Այլ մարզեր | Ընդամենը |
|-------------------------------------|--------------|-------------------|-----------------|
| Իգական, ընդամենը, այդ թվում՝ | 667 | 1449 | 2116 |
| | 31.5% | 68.5% | 100.0% |
| | 100.0% | 100.0% | 100.0% |
| <i>ոչ տառաճանաչ</i> | | 10 | 10 |
| | | 100.0% | 100.0% |
| | | 0.7% | 0.5% |
| <i>չունի տարրական</i> | 1 | 6 | 7 |
| | 14.3% | 85.7% | 100.0% |
| | 0.1% | 0.4% | 0.3% |
| <i>տարրական</i> | 10 | 73 | 83 |
| | 12.0% | 88.0% | 100.0% |
| | 1.5% | 5.0% | 3.9% |
| <i>հիմնական ընդհանուր</i> | 38 | 141 | 179 |
| | 21.2% | 78.8% | 100.0% |
| | 5.7% | 9.7% | 8.5% |
| <i>միջնակարգ (լրիվ) ընդհանուր</i> | 200 | 627 | 827 |
| | 24.2% | 75.8% | 100.0% |
| | 30.0% | 43.3% | 39.1% |
| <i>նախնական մասնագիտական</i> | 10 | 42 | 52 |
| | 19.2% | 80.8% | 100.0% |
| | 1.5% | 2.9% | 2.5% |
| <i>միջին մասնագիտական</i> | 147 | 358 | 505 |
| | 29.1% | 70.9% | 100.0% |
| | 22.0% | 24.7% | 23.9% |
| <i>բարձրագույն</i> | 261 | 192 | 453 |
| | 57.6% | 42.4% | 100.0% |
| | 39.1% | 13.3% | 21.4% |

| | | | |
|---|------------|-------------|-------------|
| Արական, ընդամենը, այդ թվում՝ | 506 | 1270 | 1776 |
| | 28.5% | 71.5% | 100.0% |
| | 100.0% | 100.0% | 100.0% |
| <i>ոչ տառաճանաչ</i> | 1 | 7 | 8 |
| | 12.5% | 87.5% | 100.0% |
| | 0.2% | 0.6% | 0.5% |
| <i>չունի տարրական</i> | 1 | 4 | 5 |
| | 20.0% | 80.0% | 100.0% |
| | 0.2% | 0.3% | 0.3% |
| <i>տարրական</i> | 6 | 57 | 63 |
| | 9.5% | 90.5% | 100.0% |
| | 1.2% | 4.5% | 3.5% |
| <i>հիմնական ընդհանուր</i> | 20 | 135 | 155 |
| | 12.9% | 87.1% | 100.0% |
| | 4.0% | 10.6% | 8.7% |
| <i>միջնակարգ (լրիվ) ընդհանուր</i> | 148 | 514 | 662 |
| | 22.4% | 77.6% | 100.0% |
| | 29.2% | 40.5% | 37.3% |
| <i>նախնական մասնագիտական</i> | 16 | 62 | 78 |
| | 20.5% | 79.5% | 100.0% |
| | 3.2% | 4.9% | 4.4% |
| <i>միջին մասնագիտական</i> | 115 | 269 | 384 |
| | 29.9% | 70.1% | 100.0% |
| | 22.7% | 21.2% | 21.6% |
| <i>բարձրագույն</i> | 199 | 222 | 421 |
| | 47.3% | 52.7% | 100.0% |
| | 39.3% | 17.5% | 23.7% |

**Աղյուսակ 5. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ զբաղվածության
կարգավիճակի՝ մարզերով**

| Սեռը և զբաղվածության կարգավիճակը | Երևան | Այլ մարզեր | Ընդամենը |
|---|--------------|-------------------|-----------------|
| Ընդամենը, այդ թվում՝ | 1173 | 2719 | 3892 |
| | 30.1% | 69.9% | 100.0% |
| | 100.0% | 100.0% | 100.0% |
| <i>զբաղված, այդ թվում՝ ինքնազբաղված</i> | 506 | 1177 | 1683 |
| | 30.1% | 69.9% | 100.0% |
| | 43.1% | 43.3% | 43.2% |
| <i>գործազուրկ</i> | 294 | 627 | 921 |
| | 31.9% | 68.1% | 100.0% |
| | 25.1% | 23.1% | 23.7% |
| <i>ուսանող</i> | 81 | 150 | 231 |
| | 35.1% | 64.9% | 100.0% |
| | 6.9% | 5.5% | 5.9% |
| <i>թոշակառու</i> | 215 | 526 | 741 |
| | 29.0% | 71.0% | 100.0% |
| | 18.3% | 19.3% | 19.0% |
| <i>նշվածներից ոչ մեկը</i> | 77 | 239 | 316 |
| | 24.4% | 75.6% | 100.0% |
| | 6.6% | 8.8% | 8.1% |

Աղյուսակ 6. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ սեռի և զբաղվածության կարգավիճակի՝ մարզերով

| Սեռը և զբաղվածության կարգավիճակը | Երևան | Այլ մարզեր | Ընդամենը |
|---|--------------|-------------------|-----------------|
| Իգական, ընդամենը, այդ թվում՝ | 667 | 1449 | 2116 |
| | 31.5% | 68.5% | 100.0% |
| | 100.0% | 100.0% | 100.0% |
| <i>զբաղված, այդ թվում՝ ինքնազբաղված</i> | 205 | 486 | 691 |
| | 29.7% | 70.3% | 100.0% |
| | 30.7% | 33.5% | 32.7% |
| <i>գործազուրկ</i> | 208 | 425 | 633 |
| | 32.9% | 67.1% | 100.0% |
| | 31.2% | 29.3% | 29.9% |
| <i>ուսանող</i> | 48 | 79 | 127 |
| | 37.8% | 62.2% | 100.0% |
| | 7.2% | 5.5% | 6.0% |
| <i>թոշակառու</i> | 148 | 304 | 452 |
| | 32.7% | 67.3% | 100.0% |
| | 22.2% | 21.0% | 21.4% |
| <i>նշվածներից ոչ մեկը</i> | 58 | 155 | 213 |
| | 27.2% | 72.8% | 100.0% |
| | 8.7% | 10.7% | 10.1% |
| Արական, ընդամենը, այդ թվում՝ | 506 | 1270 | 1776 |
| | 28.5% | 71.5% | 100.0% |
| | 100.0% | 100.1% | 100.0% |
| <i>զբաղված, այդ թվում՝ ինքնազբաղված</i> | 301 | 692 | 992 |
| | 30.3% | 69.8% | 100.1% |
| | 59.5% | 54.5% | 55.9% |
| <i>գործազուրկ</i> | 86 | 202 | 288 |
| | 29.9% | 70.1% | 100.0% |
| | 17.0% | 15.9% | 16.2% |
| <i>ուսանող</i> | 33 | 71 | 104 |
| | 31.7% | 68.3% | 100.0% |
| | 6.5% | 5.6% | 5.9% |
| <i>թոշակառու</i> | 67 | 222 | 289 |
| | 23.2% | 76.8% | 100.0% |
| | 13.2% | 17.5% | 16.3% |
| <i>նշվածներից ոչ մեկը</i> | 19 | 84 | 103 |
| | 18.4% | 81.6% | 100.0% |
| | 3.8% | 6.6% | 5.8% |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԾԽԱԽՈՏ

Աղյուսակ 1. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ ծխելու հայտանիշի (ըստ սեռի և տարիքային խմբերի)

| Սեռը և տարիքային խմբերը | Ծխում է | Չի ծխում | Ընդամենը |
|-------------------------------------|----------------|-----------------|-----------------|
| Ընդամենը, այդ թվում՝ | 28.4% | 71.6% | 100.0% |
| <i>16-24</i> | 19.3% | 80.7% | 100.0% |
| <i>25-34</i> | 32.6% | 67.4% | 100.0% |
| <i>35-44</i> | 31.8% | 68.2% | 100.0% |
| <i>45-54</i> | 34.1% | 65.9% | 100.0% |
| <i>55-64</i> | 31.4% | 68.6% | 100.0% |
| <i>65 և բարձր</i> | 21.4% | 78.6% | 100.0% |
| Իգական, ընդամենը, այդ թվում՝ | 2.1% | 97.9% | 100.0% |
| <i>16-24</i> | 1.4% | 98.6% | 100.0% |
| <i>25-34</i> | 1.8% | 98.2% | 100.0% |
| <i>35-44</i> | 2.5% | 97.5% | 100.0% |
| <i>45-54</i> | 1.9% | 98.1% | 100.0% |
| <i>55-64</i> | 4.9% | 95.1% | 100.0% |
| <i>65 և բարձր</i> | 1.5% | 98.5% | 100.0% |
| Արական, ընդամենը, այդ թվում՝ | 59.6% | 40.4% | 100.0% |
| <i>16-24</i> | 39.2% | 60.8% | 100.0% |
| <i>25-34</i> | 69.4% | 30.6% | 100.0% |
| <i>35-44</i> | 67.2% | 32.8% | 100.0% |
| <i>45-54</i> | 69.0% | 31.0% | 100.0% |
| <i>55-64</i> | 64.2% | 35.8% | 100.0% |
| <i>65 և բարձր</i> | 48.9% | 51.1% | 100.0% |

Աղյուսակ 2. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ ծխելու հայտանիշի (ըստ մարզերի և տարիքային խմբերի)

| Մարզը և տարիքային խմբերը | Ծխում է | Չի ծխում | Ընդամենը |
|---|----------------|-----------------|-----------------|
| Երևան, ընդամենը, այդ թվում՝ | 26.0% | 74.0% | 100.0% |
| <i>16-24</i> | 19.5% | 80.5% | 100.0% |
| <i>25-34</i> | 32.8% | 67.2% | 100.0% |
| <i>35-44</i> | 29.1% | 70.9% | 100.0% |
| <i>45-54</i> | 31.6% | 68.4% | 100.0% |
| <i>55-64</i> | 25.9% | 74.1% | 100.0% |
| <i>65 և բարձր</i> | 16.1% | 83.9% | 100.0% |
| Այլ մարզեր, ընդամենը, այդ թվում՝ | 29.4% | 70.6% | 100.0% |
| <i>16-24</i> | 19.2% | 80.8% | 100.0% |
| <i>25-34</i> | 32.5% | 67.5% | 100.0% |
| <i>35-44</i> | 32.8% | 67.2% | 100.0% |
| <i>45-54</i> | 35.3% | 64.7% | 100.0% |
| <i>55-64</i> | 33.7% | 66.3% | 100.0% |
| <i>65 և բարձր</i> | 23.7% | 76.3% | 100.0% |

Աղյուսակ 3. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ ծխելու հայտանիշի. ք. Երևան (ըստ սեռի և տարիքային խմբերի)

| Սեռը և տարիքային խմբերը | Ծխում է | Չի ծխում | Ընդամենը |
|-------------------------------------|--------------|--------------|---------------|
| Իգական, ընդամենը, այդ թվում՝ | 4.3% | 95.7% | 100.0% |
| 16-24 | 1.8% | 98.2% | 100.0% |
| 25-34 | 4.7% | 95.3% | 100.0% |
| 35-44 | 5.5% | 94.5% | 100.0% |
| 45-54 | 4.3% | 95.7% | 100.0% |
| 55-64 | 8.7% | 91.3% | 100.0% |
| 65 և բարձր | 3.1% | 96.9% | 100.0% |
| Արական, ընդամենը, այդ թվում՝ | 54.7% | 45.3% | 100.0% |
| 16-24 | 41.8% | 58.2% | 100.0% |
| 25-34 | 65.2% | 34.8% | 100.0% |
| 35-44 | 59.3% | 40.7% | 100.0% |
| 45-54 | 63.6% | 36.4% | 100.0% |
| 55-64 | 53.5% | 46.5% | 100.0% |
| 65 և բարձր | 38.7% | 61.3% | 100.0% |

Աղյուսակ 4. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ ծխելու հայտանիշի. այլ մարզեր (ըստ սեռի և տարիքային խմբերի)

| Սեռը և տարիքային խմբերը | Ծխում է | Չի ծխում | Ընդամենը |
|-------------------------------------|--------------|--------------|---------------|
| Իգական, ընդամենը, այդ թվում՝ | 1.1% | 98.9% | 100.0% |
| 16-24 | 1.2% | 98.8% | 100.0% |
| 25-34 | 0.4% | 99.6% | 100.0% |
| 35-44 | 1.4% | 98.6% | 100.0% |
| 45-54 | 0.7% | 99.3% | 100.0% |
| 55-64 | 2.9% | 97.1% | 100.0% |
| 65 և բարձր | 0.8% | 99.2% | 100.0% |
| Արական, ընդամենը, այդ թվում՝ | 61.6% | 38.4% | 100.0% |
| 16-24 | 38.2% | 61.8% | 100.0% |
| 25-34 | 71.4% | 28.6% | 100.0% |
| 35-44 | 69.9% | 30.1% | 100.0% |
| 45-54 | 71.4% | 28.6% | 100.0% |
| 55-64 | 68.0% | 32.0% | 100.0% |
| 65 և բարձր | 52.4% | 47.6% | 100.0% |

ԱԼԿՈՅՈԼ

Աղյուսակ 5. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ վերջին 1 տարվա ընթացքում ալկոհոլ օգտագործելու հայտանիշի (ըստ սեռի և տարիքային խմբերի)

| Սեռը և տարիքային խմբերը | Օգտագործել է | Չի օգտագործել | Ընդամենը |
|--|---------------------|----------------------|-----------------|
| Ընդամենը, այդ թվում՝ | 51.2% | 48.8% | 100.0% |
| 16-24 | 36.4% | 63.6% | 100.0% |
| 25-34 | 52.4% | 47.6% | 100.0% |
| 35-44 | 57.2% | 42.8% | 100.0% |
| 45-54 | 58.8% | 41.2% | 100.0% |
| 55-64 | 54.3% | 45.7% | 100.0% |
| 65 և բարձր | 47.8% | 52.2% | 100.0% |
| Իգական, ընդամենը, այդ թվում՝ | 28.5% | 71.5% | 100.0% |
| 16-24 | 20.6% | 79.4% | 100.0% |
| 25-34 | 27.8% | 72.2% | 100.0% |
| 35-44 | 34.9% | 65.1% | 100.0% |
| 45-54 | 32.9% | 67.1% | 100.0% |
| 55-64 | 28.3% | 71.7% | 100.0% |
| 65 և բարձր | 25.2% | 74.8% | 100.0% |
| Արական, ընդամենը, այդ թվում՝ | 78.3% | 21.7% | 100.0% |
| 16-24 | 54.0% | 46.0% | 100.0% |
| 25-34 | 81.9% | 18.1% | 100.0% |
| 35-44 | 83.9% | 16.1% | 100.0% |
| 45-54 | 86.8% | 13.2% | 100.0% |
| 55-64 | 86.7% | 13.3% | 100.0% |
| 65 և բարձր | 79.2% | 20.8% | 100.0% |

Աղյուսակ 6. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ վերջին 1 տարվա ընթացքում ալկոհոլ օգտագործելու հայտանիշի (ըստ մարզերի և տարիքային խմբերի)

| Մարզը և տարիքային խմբերը | Օգտագործել է | Չի օգտագործել | Ընդամենը |
|--|---------------------|----------------------|-----------------|
| Երևան, ընդամենը, այդ թվում՝ | 53.5% | 46.5% | 100.0% |
| 16-24 | 43.4% | 56.6% | 100.0% |
| 25-34 | 56.1% | 43.9% | 100.0% |
| 35-44 | 62.9% | 37.1% | 100.0% |
| 45-54 | 55.9% | 44.1% | 100.0% |
| 55-64 | 58.9% | 41.1% | 100.0% |
| 65 և բարձր | 45.9% | 54.1% | 100.0% |
| Այլ մարզեր, ընդամենը, այդ թվում՝ | 50.2% | 49.8% | 100.0% |
| 16-24 | 33.4% | 66.6% | 100.0% |
| 25-34 | 50.7% | 49.3% | 100.0% |
| 35-44 | 55.1% | 44.9% | 100.0% |
| 45-54 | 60.2% | 39.8% | 100.0% |
| 55-64 | 52.3% | 47.7% | 100.0% |
| 65 և բարձր | 48.6% | 51.4% | 100.0% |

Աղյուսակ 7. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ վերջին 1 տարվա ընթացքում ակտիվ օգտագործելու հայտանիշի. ք. Երևան (ըստ սեռի և տարիքային խմբերի)

| Սեռը և տարիքային խմբերը | Օգտագործել է | Չի օգտագործել | Ընդամենը |
|-------------------------------------|--------------|---------------|---------------|
| Իգական, ընդամենը, այդ թվում՝ | 37.2% | 62.8% | 100.0% |
| 16-24 | 31.6% | 68.4% | 100.0% |
| 25-34 | 38.7% | 61.3% | 100.0% |
| 35-44 | 48.2% | 51.8% | 100.0% |
| 45-54 | 38.4% | 61.6% | 100.0% |
| 55-64 | 37.7% | 62.3% | 100.0% |
| 65 և բարձր | 30.0% | 70.0% | 100.0% |
| Արական, ընդամենը, այդ թվում՝ | 74.9% | 25.1% | 100.0% |
| 16-24 | 58.2% | 41.8% | 100.0% |
| 25-34 | 76.1% | 23.9% | 100.0% |
| 35-44 | 81.6% | 18.4% | 100.0% |
| 45-54 | 76.3% | 23.7% | 100.0% |
| 55-64 | 93.0% | 7.0% | 100.0% |
| 65 և բարձր | 73.3% | 26.7% | 100.0% |

Աղյուսակ 8. Հարցվածների թվաքանակի բաշխումն ըստ վերջին 1 տարվա ընթացքում ակտիվ օգտագործելու հայտանիշի. այլ մարզեր (ըստ սեռի և տարիքային խմբերի)

| Սեռը և տարիքային խմբերը | Օգտագործել է | Չի օգտագործել | Ընդամենը |
|-------------------------------------|--------------|---------------|---------------|
| Իգական, ընդամենը, այդ թվում՝ | 24.5% | 75.5% | 100.0% |
| 16-24 | 15.4% | 84.6% | 100.0% |
| 25-34 | 22.7% | 77.3% | 100.0% |
| 35-44 | 29.9% | 70.1% | 100.0% |
| 45-54 | 30.2% | 69.8% | 100.0% |
| 55-64 | 23.5% | 76.5% | 100.0% |
| 65 և բարձր | 22.8% | 77.2% | 100.0% |
| Արական, ընդամենը, այդ թվում՝ | 79.6% | 20.4% | 100.0% |
| 16-24 | 52.4% | 47.6% | 100.0% |
| 25-34 | 84.7% | 15.3% | 100.0% |
| 35-44 | 84.7% | 15.3% | 100.0% |
| 45-54 | 91.4% | 8.6% | 100.0% |
| 55-64 | 84.4% | 15.6% | 100.0% |
| 65 և բարձր | 81.3% | 18.8% | 100.0% |

Աղյուսակ 9. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ ալկոհոլի օգտագործման հաճախականության (ըստ սեռի և տարիքային խմբերի)

| Սեռը և տարիքային խմբերը | շաբաթը 4 անգամ կամ ավելի հաճախ | շաբաթը 2-3 անգամ | ամիսը 2-4 անգամ | ամիսը մեկ անգամ կամ ավելի հազվադեպ | Ընդամենը |
|-------------------------------------|--------------------------------|------------------|-----------------|------------------------------------|---------------|
| Ընդամենը, այդ թվում՝ | 6.4% | 10.9% | 27.6% | 55.0% | 100.0% |
| 16-24 | 1.2% | 3.2% | 18.5% | 77.1% | 100.0% |
| 25-34 | 2.2% | 7.4% | 32.8% | 57.6% | 100.0% |
| 35-44 | 4.3% | 13.2% | 28.6% | 53.9% | 100.0% |
| 45-54 | 7.6% | 12.7% | 31.0% | 48.7% | 100.0% |
| 55-64 | 9.5% | 12.9% | 29.9% | 47.8% | 100.0% |
| 65 և բարձր | 13.9% | 13.6% | 21.7% | 50.8% | 100.0% |
| Իգական, ընդամենը, այդ թվում՝ | 1.2% | 1.7% | 9.1% | 88.1% | 100.0% |
| 16-24 | | | | 100.0% | 100.0% |
| 25-34 | 1.1% | 1.1% | 7.5% | 90.3% | 100.0% |
| 35-44 | | 1.4% | 12.8% | 85.8% | 100.0% |
| 45-54 | | 2.9% | 9.4% | 87.7% | 100.0% |
| 55-64 | 3.4% | 1.7% | 8.6% | 86.2% | 100.0% |
| 65 և բարձր | 4.0% | 2.0% | 12.1% | 81.8% | 100.0% |
| Արական, ընդամենը, այդ թվում՝ | 8.7% | 15.0% | 35.6% | 40.7% | 100.0% |
| 16-24 | 1.7% | 4.6% | 26.3% | 67.4% | 100.0% |
| 25-34 | 2.6% | 10.0% | 43.0% | 44.3% | 100.0% |
| 35-44 | 6.4% | 19.1% | 36.5% | 37.9% | 100.0% |
| 45-54 | 10.7% | 16.7% | 39.9% | 32.7% | 100.0% |
| 55-64 | 11.9% | 17.5% | 38.5% | 32.2% | 100.0% |
| 65 և բարձր | 18.3% | 18.8% | 25.9% | 37.1% | 100.0% |

Աղյուսակ 10. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ ալկոհոլի օգտագործման հաճախականության (ըստ մարզերի և տարիքային խմբերի)

| Մարզը և տարիքային խմբերը | շաբաթը 4 անգամ կամ ավելի հաճախ | շաբաթը 2-3 անգամ | ամիսը 2-4 անգամ | ամիսը մեկ անգամ կամ ավելի հազվադեպ | Ընդամենը |
|--|--------------------------------|------------------|-----------------|------------------------------------|---------------|
| Երևան, ընդամենը, այդ թվում՝ | 4.9% | 5.3% | 26.0% | 63.8% | 100.0% |
| 16-24 | | | 20.2% | 79.8% | 100.0% |
| 25-34 | 0.9% | 3.6% | 27.9% | 67.6% | 100.0% |
| 35-44 | 5.6% | 4.8% | 25.0% | 64.5% | 100.0% |
| 45-54 | 5.6% | 7.0% | 28.0% | 59.4% | 100.0% |
| 55-64 | 6.1% | 4.5% | 28.8% | 60.6% | 100.0% |
| 65 և բարձր | 11.7% | 10.6% | 25.5% | 52.1% | 100.0% |
| Այլ մարզեր, նդամենը, այդ թվում՝ | 7.1% | 13.5% | 28.3% | 51.0% | 100.0% |
| 16-24 | 1.9% | 5.0% | 17.5% | 75.6% | 100.0% |
| 25-34 | 2.8% | 9.4% | 35.4% | 52.4% | 100.0% |
| 35-44 | 3.7% | 16.7% | 30.1% | 49.5% | 100.0% |
| 45-54 | 8.5% | 15.1% | 32.3% | 44.1% | 100.0% |
| 55-64 | 11.1% | 17.0% | 30.4% | 41.5% | 100.0% |
| 65 և բարձր | 14.8% | 14.8% | 20.1% | 50.2% | 100.0% |

Աղյուսակ 11. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ միևնույն ժամանակ/դեպքում վեց բաժակից ավելի ալկոհոլ օգտագործելու հայտանիշի (ըստ սեռի և տարիքային խմբերի)

| Սեռը և տարիքային խմբերը | ամեն օր կամ գրեթե ամեն օր | ամեն շաբաթ | ամեն ամիս | ամիսը մեկ անգամից պակաս | երբեք | Ընդամենը |
|------------------------------------|---------------------------|-------------|-------------|-------------------------|--------------|---------------|
| Ընդամենը, այդ թվում՝ | 1.0% | 3.2% | 5.2% | 25.5% | 65.2% | 100.0% |
| 16-24 | 1.2% | 2.0% | 2.8% | 19.7% | 74.3% | 100.0% |
| 25-34 | 0.3% | 2.8% | 6.8% | 25.1% | 65.0% | 100.0% |
| 35-44 | 0.7% | 3.1% | 6.1% | 28.8% | 61.2% | 100.0% |
| 45-54 | 1.1% | 4.6% | 5.5% | 28.1% | 60.8% | 100.0% |
| 55-64 | 1.5% | 4.0% | 7.5% | 27.9% | 59.2% | 100.0% |
| 65 և բարձր | 1.2% | 1.9% | 2.5% | 20.7% | 73.7% | 100.0% |
| Իգական ընդամենը, այդ թվում՝ | | 0.3% | 0.7% | 3.2% | 95.9% | 100.0% |
| 16-24 | | | 1.4% | 2.7% | 95.9% | 100.0% |
| 25-34 | | | 1.1% | 4.3% | 94.6% | 100.0% |
| 35-44 | | 0.7% | | 5.0% | 94.3% | 100.0% |
| 45-54 | | | | 2.2% | 97.8% | 100.0% |
| 55-64 | | | 1.7% | 3.4% | 94.8% | 100.0% |
| 65 և բարձր | | 1.0% | 1.0% | 1.0% | 97.0% | 100.0% |
| Արական ընդամենը, այդ թվում՝ | 1.4% | 4.4% | 7.2% | 35.2% | 51.9% | 100.0% |
| 16-24 | 1.7% | 2.9% | 3.4% | 26.9% | 65.1% | 100.0% |
| 25-34 | 0.4% | 3.9% | 9.1% | 33.5% | 53.0% | 100.0% |
| 35-44 | 1.1% | 4.3% | 9.2% | 40.8% | 44.7% | 100.0% |
| 45-54 | 1.5% | 6.5% | 7.7% | 38.7% | 45.5% | 100.0% |
| 55-64 | 2.1% | 5.6% | 9.8% | 37.8% | 44.8% | 100.0% |
| 65 և բարձր | 1.8% | 2.2% | 3.1% | 29.5% | 63.4% | 100.0% |

Աղյուսակ 12. Ալկոհոլ օգտագործողների թվաքանակի բաշխումն ըստ միևնույն ժամանակ/դեպքում վեց բաժակից ավելի ալկոհոլ օգտագործելու հայտանիշի (ըստ մարզերի և տարիքային խմբերի)

